# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

40ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 20 (1970) ՇԱԲԱԹ, Մայիս 30,2020
VOLUME 40, NO. 20 (1970) SATURDAY MAY 30, 2020

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

**ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ**

## Կը Նշենք Սարդարապատի Հերոսամարտի Տարեդարձը

Հայ ժողովուրդի համար Մայիս ամիսը յիրաւի կը հանդիսանայ յաղթանակներու ամիս: Ինչպէս ամէն տարի, 2020-ի Մայիսը սկսանք Համաշխարհային Առաջին Պատերազմի աւարտի եւ Շուշիի ազատագրման տարեդարձները նշելով: Ամիսը կը փակենք տօնելով՝ 1918 թուականի Մայիսի 21-28-ին, Արարատեան դաշտի վրայ մղուած Սարդարապատի հերոսամարտերու ընթացքին թրքական զօրքերուն դէմ մեր ժողովուրդի տարած վճռորոշ յաղթանակը, որուն շնորհիւ, 600 տարիներու ընդմիջումէն ետք վերականգնեցաւ Հայոց պետականութիւնը ու հռչակուեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը:

Սարդարապատի փառահեղ յաղթանակը կերտուեցաւ շնորհիւ մեր ժողովուրդի բացառիկ միասնականութեան, յամառ կամքին եւ անկոտրում ոգիին: Յաղթանակի բանալին կը կայանար Հայ զինուորի, Հայ գիւղացիի, Հայ կղերականի ընդգրկումովը զինուորական գործողութիւններուն մէջ, կասեցնելով օսմանեան կանոնաւոր բանակի լաւապէս զինուած ուժերու յառաջխաղացքը դէպի Երեւան, հոն իր աւարտին հասցնելու նպատակով՝ ցեղասպանութեամբ սկսած անոնց հայաջինջ ծրագիրները:

Հայութիւնը սակայն պատրաստ չէր այդ մարտահրաւէրի առջեւ ընկրկելու եւ կամ անձնատուր ըլլալու: Սարդարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի ճակատներուն վրայ մղուող մարտերու ընթացքին փայլեցաւ ոչ միայն հայ կամաւորներու դիմադրողականութիւնը ու անձնազոհութիւնը, այլ եւ հայ հրամանատարներու ռազմավարական միտքը, որոնց շնորհիւ կարելի դարձաւ նախ կասեցնել թշնամիի յառաջխաղացքը, ապա ճեղքել անոնց գիծերը ու ցիրուցան ընել զինուորները՝ ստիպելով զանոնք փախուստի դիմելու, թրքական բանակը մատնելով անփառունակ պարտութեան:

Սարդարապատի հերոսամարտի կերտման մէջ կարեւոր դեր ունեցաւ Պանդուխտի (Միքայէլ Սերեան) գլխաւորած Հնչակեաններու խումբը, որուն մասնակցութիւնը վճռական գործողութիւններուն արժանի ուշադրութեան չէ արժանացած, յատկապէս Հայոց պատմութեան գիրքերուն մէջ:

Կարեւոր բաց մը ամբողջացնելու գործին մէջ իր մեծ ներդրումը ունեցաւ Տոքթ. Եղիկ Ճէրէճեանի՝ Պանդուխտի կեանքին ու գործունէութեան նուիրուած գիրքը, որ լոյս տեսաւ 2018 թուականին՝ Սարտարապատի հերոսամարտի 100-

Շար.ը էջ 5

## ՄԻԵԴ-ն Վճռած է. Ազատ Արձակելով Սաֆարովին՝ Ատրպէյճան Խախտած է Եւրոպական Համաձայնութիւնը




*Մարդու Իրաւունքներու Եւրոպական Դատարանը (ՄԻԵԴ) հրապարակած է, ատրպէյճանցի սպայ Ռամիլ Սաֆարովի կողմէ Հունգարիոյ մէջ Գուրգէն Մարգարեանի սպանութեան եւ հետագային ատրպէյճանցի սպայի արտայանձնման ու պատիժէն ազատ արձակուելու գործով վճիռը:*

*ՄԻԵԴ-ն եզրայանգած է, որ Ատրպէյճանը խախտած է Եւրոպական (կոնվենցիայի) համաձայնութեան 2-րդ յօդուածը՝ կեանքի իրաւունքը, ինչպէս նաեւ 14-րդ յօդուածը՝ խտրականութեան արգելքը:*

*«Մակուչեան ու Մինասեան ընդդէմ Ատրպէյճանի եւ Հունգարիոյ» գործով վճիռին մէջ ըսուած է, որ Ատրպէյճանը ձախողած է իր սպայի կողմէն ցեղային ատելութեան հողի վրայ կատարուած յանցանքի համար ազատազրկման ապահովումը, աւելին՝ զինք ներած է ու ապահոված անոր յառաջխաղացումը:*

*«Պարզուեց, որ Ատրպէյճանի*

Շար.ը էջ 5

## ՀԿԲՄ-ի Միջոցաւ Սննդամթերքի Բաշխում Փասատինայի Մէջ




ՀԿԲՄ-ի Փասատինայի Կ"եդրոնին առջեւ տեղի կ'ունենայ սննդամթերքի բաշխում

*Գորոնա ժահրի պատճառած բազմապիսի դժուարութիւնները յաղթահարելու նպատակով, աշխարհի տարբեր երկիրներու մէջ ստեղծուեցան մարդասիրական տարբեր մակարդակներու օժանդակութիւն հասցնելու կեդրոններ:*

*Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (ՀԿԲՄ) Փասատինայի կեդրոնի գովելի նախաձեռնութիւններէն մին եղաւ սննդամթերքի հայթայթումով օգնել համաճարակէն տուժած անհատներուն եւ ընտանիքներուն:*

*Այս կապակցութեամբ կազմակերպուած էր խառն յանձնախումբ մը, որուն մաս կը կազմէին ներկայացուցիչներ՝ շրջանի ՀՄՄ-ի եւ ՍԴՀԿ «Փարամազ» մասնաճիւղի վարչութիւններէն եւ այլ անհատ կամաւորներէ: Անոնք լաւապէս պատրաստած էին սննդամ-*

Շար.ը էջ 5

## ՍԴՀԿ Անդամ Սարօ Մարտիրեան Ընտրուեցաւ Ալֆորվիլի Փոխ-Քաղաքապետ



Ալֆորվիլի փոխ-քաղաքապետ ընտրուած Սարօ Մարտիրեան

*Կիրակի, Մայիս 24-ին տեղի ունեցաւ Փարիզի արուարձաններէն՝ հայաշատ Ալֆորվիլի նորընտիր քաղաքապետական խորհուրդի անդամներու պաշտօնի ստանձման արարողութիւնը:*

*Քաղաքապետ դարձաւ Լուք Քարվունաս, իսկ ՍԴՀԿ Ֆրանսայի շրջանի ատենապետ՝ Սարօ Մարտիրեան ընտրուեցաւ քաղաքապետի տեղակալ:*

*Այս առթիւ իր ունեցած ելոյթին մէջ Մարտիրեան յատկապէս ըսաւ-. «41 տարիներ առաջ այս քաղաքը հիւրընկալեց մեր ընտանիքի անդամները եւ առիթը տուաւ դառնալու այն ինչ որ եմ այսօր: Այժմ եկած է հերթը ինծի՝ վերադարձնելու Արֆորվիլին եւ ծառայելու յանձնառութեամբ եւ անձնազոհութեամբ:*

*«Այս առթիւ շնորհակալ եմ իմ ծնողներուն, որոնք Թուրքիայէն եկան այստեղ, որպէսզի ես ունենամ աւելի լաւ ապագայ: Շնորհակալ եմ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան իմ ընկերներուն, իրենց աջակցութեան համար եւ յատուկ շնորհակալութիւն իմ տիկնոջ՝ Ֆլորա Յակոբեանին, որ նեցուկ եղաւ ինծի՝ տունէն իմ եկար բացակայութիւններու ընթացքին:*

*«Ես հպարտ եմ կրելու այս եռագոյն ժապաւէնը: Ինչպէս շատ հայեր, մենք կրողներն ենք Ֆրանսայի արժէքներուն, պատմութեան եւ մշակոյթին, որ դարձուցած ենք մերը ու կը պահենք մեր Հայկական աւանդոյթներու կողքին:*

*« 100% Ֆրանսացի, 100% Հայ, ինչպէս կը սիրէր ըսել Շարլ Ազնաւուր»:*

*Ալֆորվիլի մէջ կը գտնուի Հայոց Եկեղեցին եւ կան փողոցներ Կոմիտասի եւ Միսաք Մանուշեանի անուններով:*

*Ալֆորվիլ քոյր քաղաք է Աշտարակի հետ՝ 1993 թուականէն ի վեր, իսկ Օշականի հետ՝ 2001-էն ասդին:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Իրավիճակն Իսկապէս Լրջանում է

Այնպէս ստացուեց, որ Միքայէլ Մինասեանի հերթական տեսաուղերձի (շատերն, ի դէպ, դա ոչ թէ «տեսաուղերձ» են անուանում, այլ «փեսաուղերձ») հէնց յաջորդ օրը գրեթէ նոյնաբովանդակ յայտարարութեամբ հանդէս եկաւ նաեւ ԱԱԾ նախկին տնօրէն Արթուր Վանեցեանը: Նախապէս համաձայնեցուած էր դա, թէ ոչ՝ այնքան էլ էական չէ: Փաստն այն է, որ երկուսն էլ Հայաստանում յեղաշրջում իրականացնելու նոյն ծրագիրն են առաջարկում: Ընդորում՝ ծրագիրը բաւականին պարզունակ է եւ շատ լաւ նկարագրուած է Թումանեանի «Թմկաբերդի առումը» պօէմում: Պէտք է աշուղների (Մինասեանն ու Վանեցեանը հէնց անուղղակիօրէն նախկինների աշուղների դերն են ստանձնել) միջոցով փառաբանել Նիկոլ Փաշինեանի թիմակիցների բացառիկ խելքն ու կազմակերպչական հմտութիւնները, հաւատացնել, որ յեղաշրջումից յետոյ իրենց վիճակը շատ աւելի լաւ կը լինի, որովհետեւ իրենք հիմա Փաշինեանի ստուերում են, մինչդեռ աւելիին են արժանի, այդպիսով՝ ստիպել, որ նրանք ներսից բացեն ամրոցի դռները (պառակտեն իշխող քաղաքական ուժը), իսկ իշխանութիւնը զաւթելուց յետոյ... դէ, պօէմը երեւի կարդացել էք: Ու թող որեւէ մէկը չտարակուսի, որ այդ մարդկանց թշնամիների հետ ենք համեմատում: Նրանք իրենք են այդպէս դիրքաւորուել, իսկ նրանց խօսափողներից մէկը նոյնիսկ իշխանութիւններին սպառնալով՝ Ճապոնիայի օրինակն էր բերել, թէ տեսէք՝ 1945-ին Ճապոնիան ժամանակին ինքնակամ կապիտուլյացիայի չենթարկուեց, ու ամերիկացիները ատոմային ռումբեր նետեցին Հիրոսիմայի ու Նագասակիի վրայ, նայէք՝ յանկարծ Ճապոնիայի օրը չընկնէք: Այսինքն՝ սրանք Հայաստանն ընկալում են որպէս օտար, թշնամական երկիր, որի իշխանութիւնները եթէ անձնատուր չլինեն՝ իրենք պարզապէս կոչնչացնեն:

Արժէ՞ արդեօք լուրջ վերաբերուել այս ծրագրերին ու սպառնալիքներին: Այո, որովհետեւ պահը բաւականին յաջող են ընտրել: Կորոնավիրուսային իրավիճակը բարդ է, դրա հետեւանքները տեւական ժամանակ հնարաւոր չի լինելու յաղթահարել, այսինքն՝ սոցիալական լարուածութիւնը պահպանուելու է, տնտեսական անկումն անխուսափելի է լինելու, եւ այս ամէնի համադրութիւնն իդէալական պայմաններ է ստեղծելու այն «քաղաքական ուժերի» համար, որոնք փողից բացի ոչինչ չունեն: Նրանք համոզուած են, որ ինչքան աղքատ լինի ժողովուրդը, այնքան իրենք աւելի մեծ յաջողութիւնների կը հասնեն փողի միջոցով: Սրանց յոյսն այն է, որ սոցիալական ծանր վիճակում գտնուող մարդկանց ոչ գաղափարներն են հետաքրքրում, ոչ նպատակները, ոչ ապագան: Յուսանք՝ սխալւում են, որովհետեւ մարդիկ դեռ չեն մոռացել, թէ ինչ ճանապարհներով են այդ «քաղաքական գործիչները» կուտակել միլիոնները, եւ ում պատճառով է, որ Հայաստանն այսօր բաւարար ռեսուրսներ չունի աննախադէպ ճգնաժամի հետեւանքները լիարժէք չէզոքացնելու համար: Որտեղի՞ց լինի, եթէ անգամ պաշտօնական տուեալների համաձայն՝ Սերժ Սարգսեանի նախագահութեան տասը տարիներին միայն ապօրինի ճանապարհով Հայաստանից դուրս է բերուել աւելի քան տասը միլիարդ դոլար:

Ինչ վերաբերում է իշխանութիւններին, ապա նրանց գործունէութիւնն, ի հարկէ, անթերի չի եղել: Հիմնական սխալը երեւի եղել է այն, որ չափից դուրս մեծ յոյսեր են կապել դիմացինի ողջամտութեան հետ: Ու դա աւելի շատ վերաբերում է նախկինների հետ յարաբերութիւններին: Փաստօրէն Փաշինեանի բազմաթիւ յորդորները՝ յանկարծ որեւէ մէկի մտքով չանցնի թաւիշն ընկալել որպէս թուլութեան նշան, տեղ չեն հասել: Դիմացինը դրանք հէնց որպէս թուլութեան նշան էլ ընկալել է ու անցել յարձակման:

Մնում է յուսալ, որ սխալն ուղղելու ժամանակ դեռ կայ:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

# Արցախը Հայաստան է

ԺԻՐԱՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ

Ինձ ապշեցնում է համացանցում տեղ գտած այն խուճապը, որ սկսուել է Արցախի նորընտիր նախագահ Արայիկ Յարութիւնեանի այն խօսքերից յետոյ, թէ Արցախը Հայաստան է եւ վերջ: Վախուորած սուտի գիտակները սկսել են քննադատել քաղաքական հետեւանքները, խօսել այն մասին, թէ ինչպիսի արձագանքներ եւ հետեւանքներ կարող են ունենալ այդ խօսքերը ու կրկին փորձում են տարածել այդ վախի մթնոլորտը: Չեմ ցանկանում կոպիտ երեւալ, բայց պէտք է ասել, որ ով վախենում է ճշմարտութիւնից, թող գնայ վախ բռնողի մօտ՝ գլխին մոմ թափեն, մէկ էլ տեսար օգնեց:

Այո, եկել է ժամանակը, երբ պէտք է ասել՝ Արցախը Հայաստան է եւ վերջ, սակայն մինչ բուն թեմային անցնելը, շնորհաւորում եմ Արցախի նորընտիր նախագահին եւ ցանկանում, որ նրա ելոյթում հնչեցրած մտքերն անխուսափելի իրականութիւն դառնան:

Այժմ միջազգային քաղաքական դաշտից զգուշացողների մասին: Ադրբեջանը ամէն օր թքում է միջազգային իրաւունքի վրայ՝ խախտելով զինադադարը: 2016թ. սանձազերծելով ապրիլեան պատերազմը՝ միայն մեր զինուորների սխրագործութեան արդիւնքում ստիպուած եղաւ ընդունել, որ դեռեւս ի զօրու չէ բնաջնջել մեզ, եւ ինչպէս արձագանքեց միջազգային հանրութիւնը՝ ամօթանք տուեց ու առաջ անցաւ: Թուրքիան ցեղասպանութիւն է կատարել եւ մինչ օրս պատասխան չի տալիս: Ադրբեջանը Սումգայիթի եւ Բաքուի ջարդերի համար պատասխան չի տալիս: Ալիեւն օրը մէջ մկկում է, որ Երեւանը գրաւելու է: Իսկ ոմանք մեր երկրի ներսում խելացի դէմքով քննադատում են Արցախի նախագահին, որ նա ասաց բացարձակ ճշմարտութիւն՝ Արցախը Հայաստան է եւ վերջ՝ վախենալով, որ թշնամին մեր խօսքերը կը շահարկի: Այդպէս վախից մի օր էլ կառաջարկեն Արցախը գազամուղի, կապի եւ Հէյց-ի պէս տալ ռուսներին, որ անգութ թշնամին գլխներիս չտայ ու տանի: Ամօթ է, արժանապատուութիւն է պէտք ունենալ: Մինչեւ երբ ենք վախենալու իրերն իրենց անուններով կոչել, պատասխանատու կերպով ի լուր աշխարհի յայտարարել ինչն է մերը եւ յանուն ինչի են մեր հայրերը, եղբայրներն ու քոյրերը զոհուել եւ այսօր էլ մենք ենք պատրաստ զոհուել:

Այո՝ Արցախը Հայաստան է եւ վերջ, այս բառերը ի վերջոյ պէտք է հնչէին մեր քաղաքական գործիչների եւ իշխանաւորների շուրթերից: Ի լուր աշխարհի պէտք է ասել, որ ցեղասպանութիւնից պաշտպանուելով ազատագրել ենք մեր

Շար.ը էջ 18

# Ուժեղ Հարուած Բաքուին. ՄԻԵԴ Ջէնքը՝ Երեւանին

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

Մարդու Իրաւունքների Եւրոպական Դատարանը (ՄԻԵԴ) Մայիսի 26-ին վճիռ է հրապարակել հայ սպայ Գուրգէն Մարգարեանի սպանութեան կապակցութեամբ: 2004 թուականին բոլորիս ցնցած այդ ոճրագործութիւնը կատարուել էր ՆԱՏՕ ուսումնական ծրագրի ընթացքում, Բուդապեշտում: Ոճրագործ Ռամիլ Սաֆարովը գիշերը կացնահարել էր հայ սպայ Գուրգէն Մարգարեանին՝ ատելութեան ազգամիջեան հողի վրայ: Ռամիլ Սաֆարովը ցմահ ազատազրկման դատապարտուեց Հունգարիայում, սակայն հերոս հռչակուեց Բաքւում՝ պետական մակարդակով: 2012 թուականին Սաֆարովը արտայանձնուեց Ադրբեջանին՝ Հունգարիային մի քանի միլիարդ դոլարի ներդրումային խոստման դիմաց:

Ադրբեջանում Սաֆարովը ազատ արձակուեց եւ հերոսացուեց էլ աւելի պաթետիկ կերպով: Մարդու Իրաւունքների Եւրոպական Դատարանը Մայիսի 26-ին հրապարակել է վճիռ, որով արձանագրում է, որ Միեդ-ն արձանագրել է, որ Ադրբեջանը տապալել է ազգային ատելութեան հիմքի վրայ կատարուած սպանութեան համար պատժի կրման ապահովումը՝ ներում շնորհելով, խրախուսելով ոճրագործին, որը չի տառապել որեւէ հոգեկան հիւանդութեամբ:

Այսպիսով՝ պետութիւնը խախտել է կեանքի իրաւունքի դէմ ոտնձգութեան համար պատժի լիակատար ապահովումը՝ հիմք ստեղծելով անպատժելիութեան համար: Ադրբեջանը Մարդու իրաւունքների եւ հիմնարար ազատութիւնների պաշտպանութեան մասին կոնուենցիայի 2-րդ յօդուածի (կեանքի իրաւունք) խախտման հետ զուգահեռ խախտել է կոնուենցիայի 14-րդ յօդուածը (խտրականութեան արգելում):

ՄԻԵԴ-ը համարել է նաեւ, որ Ադրբեջանը խրախուսել է Սաֆարովի ոճրագործութիւնը: Այդպիսով, ՄԻԵԴ վճռով Ադրբեջանը դէ ֆակտօյ ճանաչւում է պետութիւն, որը հովանաւորել եւ խրախուսել է դաժան մարդասպանութիւնը, հերոսացրել ոճրագործին: Մեծ հաշուով, այստեղ չկայ որեւէ նորութիւն, կայ պարզապէս վաղուց յայտնի իրողութեան պարզ արձանագրում: Եւ Բաքուի համար, ի հարկէ, տհաճ արձանագրում՝ նկատի ունենալով այն, որ օրերս Ադրբեջանը մեծ ոգեւորութեամբ պաշտօնական պրոպագանդայի մակարդակում արձանագրում էր յաջողութիւններ եւրոպական դիւանագիտութեան ուղղութեամբ: Ի հարկէ, առաւել ցաւալի է այն, որ այդ յաջողութիւնները պրոպագանդան արձանագրում էր՝ յղում անելով հայաստանեան, այսպէս ասած, ընդդիմադիր գործիչների: ՄԻԵԴ վճիռը, թերեւս, սառը ջուր է Բաքուի վրայ: Բայց, միեւնոյն ժամանակ, անհրաժեշտ է արձանագրել թերեւս ամենակարեւորը՝ ՄԻԵԴ վճիռը կարեւորագոյն խաղաքարտ է Երեւանի ձեռքին, քաղաքական, դիւանագիտական ջանքի համար:

Բանն այն է, որ Երեւանի համար ՄԻԵԴ վճիռը չպէտք է մնա զուտ բարոյական յաղթանակի մակարդակում, այլ պէտք է «կապիտալիզացուի» եւրոպական դաշտում առնուազն եւ, ի հարկէ, հնարաւորութեան սահմանում միջազգային լայն ասպարէզում: Եւրոպական պետութիւնների հետ աշխատանքում պէտք է ՄԻԵԴ վճռի հիմքով առարկայօրէն արձանագրուի, թէ ինչպիսի պետութիւն է Ադրբեջանը, եւ ում հետ գործ ունեն եւրոպական արժէհամակարգի կրող երկրները: Բանն այն է, որ դրանք այլեւս զուտ հակամարտութեան մէջ գտնուող հայկական կողմի հռետորաբանութեան դրսեւորումներ չեն, այլ եւրոպական հեղինակաւոր բարձր դատարանի վճռով կատարուած արձանագրում, որի հանդէպ եւրոպական պետութիւնները չպէտք է մնան անտարբեր եւ անհաղորդ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Արթուր Վանեցեան Հաստատեց, Որ Հանդիպած Է Միքայէլ Մինասեանին Հետ

*Յատուկ Քննչական Ծառայութիւն (ՅՔԾ) հրաւիրուած է Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) նախկին տնօրէն Արթուր Վանեցեանը: Մուտք գործելու ժամանակ ան, «Ազատութեան» հետ զրոյցին, հաստատեց, որ ինք այստեղ հրաւիրուած է Վատիկանի մօտ նախկին դեսպան, երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի փեսայ՝ Միքայէլ Մինասեանի յայտարարութեան կապակցութեամբ:*

*Ի պատասխան «Ազատութեան» հարցին՝ Վանեցեանը հաստատեց տեղեկութիւնը, որ ինք հանդիպած է Միքայէլ Մինասեանին հետ: «Ես կարող եմ ասել միայն մի բան, որ ես գործել եմ բացառապէս իմ պաշտօնական լիազօրութիւնների շրջանակում»,- նշեց Վանեցեան:*

*Յիշեցնենք, որ Վատիկանի մօտ նախկին դեսպանը մօտ 4 շաբաթ առաջ հրապարակած տեսանիւթով յայտարարեց, որ Արթուր Վանեցեանը ԱԱԾ տնօրէնի պաշտօնը գրաւած ժամանակ հանդիպում ունեցած է իր հետ, որպէս Նիկոլ Փաշինեանի սուրհանդակ, եւ ըստ Մինասեանին, Փաշինեանը Վանեցեանի միջոցով առաջարկած է իրեն խորհրդանշական գումար վճարել պետութեան, դուրս ելլել քաղաքական դաշտէն ու որոշ ժամանակ Հայաստան չվերադառնալ, բացի այդ, իր հետ առնչուող անհատներուն հրահանգել, որ դադրին Փաշինեանի դէմ պայքարելէ: Միքայէլ Միանսեանի պնդումով՝ ինքը մերժեր է այդ առաջարկը:*

*ՅՔԾ-էն դուրս ելլելէն յետոյ, այն հարցին, թէ ինքը նման առաջարկ, որու մասին Մինասեանը յայտարարած է, ըրած է՞, Արթուր Վանեցեան պատասխանեց.- «Այդ յայտարարութեան հետ կապուած բոլորդ գիտէք, որ ՅՔԾ-ում յարուցուել է քրէական գործ, իրականացւում է նախաքննութիւն, եւ ելնելով այդ հանգամանքից եւ նախաքննութեան գաղտնիքը չբացայայտելու եւ չխախտելու նպատակով՝ ես չեմ կարող որեւէ մեկնաբանութիւն տալ այդ գործի հետ կապուած: Ո՛չ հերքում եմ, ո՛չ չեմ հերքում, ես չեմ մեկնաբանում»:*


ԱԱԾ նախկին տնօրէն Արթուր Վանեցեան

*Ինչ կը վերաբերի իր կողմէն աւելի վաղ եղած յայտարարութեան, թէ Միքայէլ Մինասեանը իրեն համար «մարդ է, որը դեռ պէտք է շատ հարցերի պատասխան տայ Հայաստանի Հանրապետութեան օրէնքների առջեւ», արդեօ՞ք այս կը նշանակէ, որ Մինասեանը քրէական յանցանքներ կատարած է, ԱԱԾ նախկին տնօրէնը նկատել տուաւ.- «Իմ կարծիքը որեւէ նշանակութիւն չունի, եթէ իրաւապահ մարմինները կը կարողանան հիմնաւորել Միքայէլ Մինասեանի կամ առհասարակ ցանկացած անձի մեղաւորութիւնը, եւ դատարանը կը ճանաչի նրան մեղաւոր, ուրեմն այդ մարդը մեղաւոր է»:*

# Մեր «Սխալը» «Քորոնա» Ժահրի Դէմ Պայքարին Մէջ. Փաշինեան

*Ի վերջոյ ինչ է մեր մարտավարութեան եւ ռազմավարութեան «սխալը» «Քորոնա» ժահրի դէմ պայքարին մէջ: Այս մասին Facebook-ի իր էջի ուղիղ եթերով նշած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:*

*Ան, մասնաւորապէս, նշած է. «Իմ եզրակացութեամբ սխալը այն է, որ մենք գուցէ չափից աւելի մեծ վստահութիւն ենք տածել մեր սիրելի հայրենակիցների անհատական պատասխանատուութեան գործօնին: Եթէ որեւէ մէկը չվարակուելու համար կանխարգելիչ գործողութիւններ է ձեռնարկում, ի վերջոյ, այդ գործողութիւնները ձեռնարկում է ոչ կառավարութեան համար, ոչ վարչապետի համար, այլ առաջին հերթին ինքն իր համար: Հետեւաբար, մեր ամբողջ ռազմավարութիւնը եղել է այն, որ մենք ինչ-որ մի շրջան մարդկանց ներկայացնենք իրավիճակի լրջութիւնը, այդ շրջանում ընդլայնենք մեր առողջապահական համակարգի հզօրութիւնները, որից յետոյ գնանք բացման եւ մարդկանց ներկայացնենք 100 տոկոսին ձգտող երաշխիքներ, որոնց պարագայում իրենք կը խուսափեն «Քորոնա» ժահրով վարակուելուց:*

*Մեր կանխավարկածը եղել է այն, որ քաղաքացին այդ պահանջները պահպանելիս դա անում է ոչ թէ կառավարութեան, ոչ թէ իշխանութեան, ոչ թէ վարչապետի, այլ իր, իր հարազատների ու ընկերների համար:*

*Կայ կարծիք, որ մենք չափից աւելի մեծ վստահութիւն ենք տածել այդ գործօնի նկատմամբ: Հիմա հարցը հետեւեալն է՝ մենք պէ՞տք է շարունակենք այդ գործօնի նկատմամբ վստահութիւն տածել, թէ ոչ: Հիմա էլ կարծում եմ, որ այնուամենայնիւ «Քորոնա» ժահրի դէմ պայքարում թիւ մէկ գործօնը պէտք է լինի մեզնից իւրաքանչիւրի անհատական պատասխանատուութիւնը՝ պայմանով, որ կառավարութիւնը յստակ տեսանելի եւ հասկանալի պայման է առաջադրում, որը քաղաքացուն կ'երաշխաւորի «Քորոնա» ժահրով վարակուելուց:*

*Մենք քննարկումների արդիւնքում եկել ենք այդ եզրակացութեան, որ կայ երեք կանոն, որոնք 95 տոկոսով կ'երաշխաւորեն «Քորոնա» ժահրով վարակուելուց: Առաջին չախտահանուած ձեռքերով դէմքին չդիպչել, կրել դիմակ, որտեղ հնարաւոր է դիմակ կրել եւ առանց դիմակի որեւէ հաղորդակցութեան մէջ չմտնել ուրիշ մարդկանց հետ, եւ պահպանել ընկերային հեռաւորութիւն: Մեր ուղերձը շարունակում է մնալ դա»:*

*Անդրադառնալով այսօրուայ ստեղծուած իրավիճակին, Փաշինեան ըսաւ. «Հայաստանում հարիւրաւոր մարդիկ շարունակում են վարակուել եւ վարակել: Մենք ուզում ենք շատ պարզ խնդիր ձեւակերպենք ու լուծենք այդ խնդիրը: Մեզնից իւրաքանչիւրը պէտք է չվարակուի եւ չվարակի:*

*Իմ կոչն ու խնդրանքն է, որ մեզնից իւրաքանչիւրը իր անհատական պատասխանատուութեամբ օգնի, որ մենք իրականացնենք, այսպէս ասած, «Քորոնա» ժահրային յեղափոխութիւն: Սա է հիմնական ուղերձը:*

*Ի հարկէ, մենք նաեւ որոշակի վարչական խստացման ենք գնալու: Գիտէք, որ սահմանուած է պահանջ բոլոր փակ տարածքներում, այդ թւում ինքնաշարժներում, աշխատանքի վայրում, կանգառներում կրել դիմակ: Այս կանոնի պահպանումը կը բերի վարակի տարածման գրեթէ զրոյական մակարդակի:*

*Առաջիկայում ոչ աշխատանքային օրեր են եւ կանխատեսում կայ, որ մարդիկ մեծ խմբերով խնջոյքներ են կազմակերպելու: Խնդրում եմ եւ յորդորում եմ պահպանել նշուած կանոնները»:*

# Դատաւոր Տանիբէկեան Եզրակացուցած Է, Որ Քոչարեանի՝ Գործի Քննութիւնը Խոչընդոտելու Վտանգը Չէ Վերացած

*Մարտ 1-ի գործով գլխաւոր ամբաստանեալ, Հայաստանի երկրորդ նախագահ՝ Ռոպերթ Քոչարեանի գործը քննող դատաւոր Աննա Տանիբէկեան, Մայիս 13-ին մերժելով զինք ազատ արձակել կալանքէն, Հայաստանի եւ Արցախի նախկին վարչապետներու անձնական երաշխաւորութեան, ինչպէս նաեւ գրաւի դիմաց, եզրայանգած է, որ գործի քննութիւնը խոչընդոտելու վտանգը չէ վերացած եւ դատավարութեան այս փուլին այն դեռ կը պահպանուի: Այս, դատաւորին թոյլ տուած է պնդելու, որ պաշտօնաթող նախագահին կալանքի տակ պահելու անհրաժեշտութիւնը չէ վերացած, եւ որ անոր, ազատութեան մէջ գտնուելու պայմաններուն տակ, հնարաւոր չ'ըլլար ապահովել Քոչարեանի պատշաճ վարքագիծը:*


Ռոպերթ Քոչարեանի գործը քննող դատաւոր Աննա Տանիբէկեան

*Այս հետեւութեան յանգելու ժամանակ, դատաւորը հաշուի առած է Քոչարեանին առաջադրուած մեղադրանքի ծանրութիւնը, նաեւ այն, որ Հայաստանը 10 տարի ղեկավարած Քոչարեանը երկար տարիներու ընթացքին, բարձր պաշտօններ գրաւած է եւ ունի կապեր ու ազդեցութիւն: Այս հանգամանքն ալ կը բարձրացնէ դատավարութեան մասնակցող անձերուն վրայ հնարաւոր ներգործութեան եւ գործի քննութեան միջամտութեան վտանգը:*

*Աննա Տանիպեկեան իր այս որոշումին համար հիմք կ'ընդունի այն, որ գործի քննութիւնը դեռեւս չէ անցած դատաքննութեան փուլ, եւ այս պահուն հետազօտուած չէ գործով ձեռք բերուած որեւէ ապացոյց:*

# Հայ Ու Որդի Ռուբէն Հայրապետեան Ներգրաւուած Են Որպէս Մեղադրեալներ

*Հայաստանի ֆութպոլի դաշնութեան նախկին նախագահ, Հայաստանի Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) նախկին պատգամաւոր Ռուբէն Հայրապետեանին ու իր որդւոյն, որպէս մեղադրեալ ներգրաւուելու որոշում առնուած է:*

*Քննչական կոմիտէն կը յայտնէ, որ յարուցուած քրէական գործի ծիրէն ներս, պարզուած է, որ Հայրապետեանի կազմակերպութեամբ՝ իր ընտանիքին պատկանող «Հարսնաքար» ճաշարան-հիւրանոց համալիրի գործադիր մարմինի ղեկավարը ազատութենէն ապօրինի զրկուած է ու շուրջ 22 օր է, որ պահուած է «Հարսնաքար», ենթարկուելով ծեծի ու նուաստացումներու:*

*Իրաւապաշտպան Նինա Կարապետեանցը, անդրադառնալով վերջին շրջանին յարուցուած քրէական գործերուն, նշեց, որ մէկը միւսի ետեւէն երկրէն դուրս կ'ելլեն ու չեն վերադառնար տարբեր քրէական գործերով անցնող նախկին պաշտօնեաներ:*


Նախկին պատգամաւոր Ռուբէն Հայրապետեան

*Ըստ Կարապետեանցի, այս իրաւապահներու թերացումն է. - «Քրէական գործի բովանդակութեան մասին որեւէ մէկս չունենք տեղեկատուութիւն, որովհետեւ ընթացակարգն է այդպիսին: Մանրամասների մասին տեղեկութիւն ունեն, մասնաւորապէս՝ ում պիտի առաջադրուի մեղադրանք, երբ պիտի առաջադրուի մեղադրանք, երբ կալանքի միջնորդութիւնը, գիտի ընդամէնը երկու մարմին. դա քննական մարմիններն են եւ դատախազութիւնը: Հետեւաբար ես բոլոր հիմքերն ունեմ կասկածելու, որ այդ արտահոսքը պատահական չէ:*

# ԼՈՒՐԵՐ

## Շուշիի Մէջ Տեղի Ունեցաւ Արցախի Նախագահ Արայիկ Յարութիւնեանի Երդման Արարողութիւնը




Արցախի նախագահի՝ Արայիկ Յարութիւնեան երդմնակալութեան արարողութեան ընթացքին

*Շուշիի մշակոյթի եւ երիտասարդութեան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Արցախի Ազգային ժողովի յատուկ նիստ, որու ընթացքին կայացաւ Լեռնային Ղարաբաղի նորընտիր նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանի երդմնակալութեան արարողութիւնը:*

*Արարողութեան ներկայ էին վարչապետ Նիկոլ Փաշինեանը, Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանը, Արցախի արդէն նախկին նախագահ Բակօ Սահակեանը, բարձրաստիճան այլ պաշտօնեաներ:*

*Ստանձնելով պաշտօնը՝ Լեռնային Ղարաբաղի չորրորդ նախագահ Արայիկ Յարութիւնեան խօսեցաւ իրեն համար կարեւոր սկզբունքներու մասին. - «Առաջին սկզբունք. մարդը բարձրագոյն արժէք է, իսկ պետութիւնը՝ բարձրագոյն արժէքին ծառայող հաստատութիւն: Ինչպէս Արցախի հանրապետութեան սահմանադրութեան երրորդ յօդուածն է ամրագրում, այո՛, մարդը բարձրագոյն արժէք է, եւ պետութեան գոյութիւնն էլ իմաստաւորւում է հենց մարդուն ծառայելով: Չկայ պետութեան որեւէ սահմանադրական գործառոյթ, որը նպատակաուղղուած չլինի իր քաղաքացիների այս կամ այն իրաւունքի կամ ազատութեան երաշխաւորմանը: Ուստի, որպէս հանրապետութեան նախագահ իմ պաշտօնաւորումն էլ միտուած է լինելու մարդուն եւ ժողովրդին անմնացորդ ծառայելուն՝ հիմնուած մարդու անօտարելի արժանապատուութեան եւ իրաւունքների ու ազատութիւնների հանդէպ յարգանքի վրայ: Երկրորդ սկզբունք. հայոց միացեալ հայրենիքի անվտանգութիւնը, ինքնիշխանութիւնը, անկախութիւնը, տարածքային ամբողջականութիւնը եւ հայ ժողովրդի ազգային արժանապատուութիւնը ենթակայ չէ որեւէ վերապահման ու սակարկման: Քանի որ Արցախի ու Հայաստանի հանրապետութիւնները մէկ միացեալ ազգային հայրենիքի անտրոհելի մասերն են, հետեւաբար Արցախի բնակչութեան գլխին կախուած սուրը պէտք է ընկալել որպէս եաթաղան ողջ հայութեան ու նրա արժանապատուութեան գլխին: Ուստի արցախահայութեան անվտանգութիւնը ողջ հայութեան անվտանգութիւնն է, արցախահայութեան արժանապատուութիւնը ողջ հայութեան արժանապատուութիւնն է, արցախահայութեան պայքարը ողջ հայութեան պայքարն է, իսկ արցախահայութեան յաջողութիւնը ողջ հայութեան յաջողութիւնն է: Եւ մենք պատրաստ ենք անսասան կանգնելու որպէս վահան ողջ հայութեան անվտանգութեան, արժանապատուութեան, պայքարի ու յաջողութիւնների հանդէպ սպառնալիքների դէմ: Մենք ունենք համազգային կամք ու զօրութիւն մեր գլխին կախուած եաթաղանը դարձնելու բահ, գրիչ ու խաչ, իսկ անհրաժեշտութեան դէպքում՝ նաեւ սուր»:*

*Ի դէպ, Յարութիւնեան նշեց, թէ մտադիր է Արցախի Ազգային ժողովը Շուշի տեղափոխել. - «Արցախը Հայաստան է, եւ վերջ: Պատմական այս հանրայայտ բանաձեւը ակունքները դարեր ի վեր հարստացել են միայն սեփական հողում հայ մարդու արարման ճիրքով ու ջանքով: Մեծ Հայքի արցախեան հատուածում Մաշտոցի հիմնած առաջին դպրոցի եւ Սուրբ Գրիգորիսի տարածած հաւատի լոյսով կրթուել եւ դաստիարակուել են հայոց սերունդները»:*

## ՀՀ Արտաքին Գործոց Նախարարութիւն. Պատերազմի Սպառնալիքները Չեն Կրնար Ազդել Հայկական Կողմերուն Վրայ



Արտաքին գործոց նախարարութեան մամլոյ քարտուղար՝ Աննա Նաղդալեան

*Պատերազմի սպառնալիքները եւ ռազմատենչ կեցուածքը, ըլլանք անոնք յայտարարութիւններու, թէ միջազգային յանձնառութիւններու խախտմամբ կայացուող լայնամասշտաբ զօրավարժութիւններու տեսքով, Ատրպէյճանի ոչ կառուցողական դիրքորոշման աւանդական բաղադրիչներն են, որոնք որեւէ ազդեցութիւն չեն կրնար ունենալ ղարաբաղեան հիմնահարցին վերաբերեալ հայկական կողմերու դիրքորոշումներուն եւ Արցախի մէջ տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացներուն վրայ: Այսպէս արձագանգած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամլոյ քարտուղար՝ Աննա Նաղդալեանը Արցախի նորընտիր նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանի, Շուշիի մէջ կայանալիք երդմնակալութեան վերաբերեալ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան:*

*«Այնուհանդերձ, դրանք միանշանակօրէն վնասում են խաղաղութեան նպաստող միջավայրի ձեւաւորմանը, որն անհրաժեշտ է բովանդակային հարցերի դիտարկման համար: Հայաստանը հաւատարիմ է հիմնախնդրի բացառապէս խաղաղ կարգաւորմանը՝ ԵԱՀԿ (Եւրոպայի մէջ Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութիւն) Մինսքի խմբի համանախագահութեան շրջանակներում», - շեշտած է Նաղդալեան իր մեկնաբանութեան մէջ, զոր հրապարակած է Արտաքին գործոց նախարարութեան լրատուութեան եւ հանրային դիւանագիտութեան վարչութիւնը:*

*«Եւս մէկ անգամ շնորհաւորելով Արցախի ժողովրդին ժողովրդավարական գործընթացների արդիւնքում իշխանութիւն ձեւաւորելու կապակցութեամբ՝ ցանկանում ենք վերահաստատել, որ Հայաստանի Հանրապետութիւնը կը շարունակի սերտօրէն համագործակցել խաղաղ գործընթացում Արցախի ժողովրդին ներկայացնող նոր իշխանութիւնների հետ եւ այդ համատեքստում հետեւողականօրէն պաշտպանել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի իրականացումը՝ առանց որեւէ սահմանափակման», - ըսուած է հաղորդագրութեան մէջ:*

*Ատրպէյճանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը Մայիս 20-ին հրապարակած յայտարարութեան մէջ, մասնաւորապէս, «սադրանք» որակած է թէ՛ Արցախի այս տարուայ կատարուած ընտրութիւնները, թէ՛ նորընտիր նախագահի երդմնակալութիւնը, պնդելով նաեւ, թէ այդ արարողութեան Հայաստանի վարչապետի մասնակցութիւնը «սեւ բիծ է իրեն ժողովրդավար ներկայացնող մարդու վարկի վրայ»: «Պատերազմը դեռ աւարտուած չէ, եւ Ատրպէյճան իրեն իրաւունք է վերապահում իր տարածքային ամբողջականութիւնը միջազգայնօրէն ճանաչուած սահմաններում վերականգնել բոլոր անհրաժեշտ եղանակներով», - Ատրպէյճանական լրատուամիջոցներու փոխանցումով, նաեւ յայտարարած էր պաշտօնական Պաքուն, աւելցնելով. - «Թող ոչ ոք չկասկածի, որ բռնագրաւուած տարածքներն ազատագրուելու են»:*

## Ապրիլին Տնտեսական Աշխուժութեան Ցուցանիշը Անկում Ապրած է 17.2 Տոկոսով

*Ապրիլին՝ նախորդ տարուայ Ապրիլի համեմատ, տնտեսական աշխուժութեան ցուցանիշը Հայաստանի մէջ աննախադէպ անկում ապրած է՝ 17.2 տոկոս, եւ այս, մէկ ամսուայ կտրուածքով, գրանցուած խոշորագոյն անկումն է 2011 թուականէն ի վեր, երբ Հայաստանի տնտեսութիւնը սկսան չափել նաեւ տնտեսական աշխուժութեան ցուցանիշով:*

*Վիճակագրական կոմիտէի հրապարակած տուեալներուն համաձայն՝ այս ապրիլին, երբ տնտեսութիւնը, ըստ էութեան, փակ էր «Քորոնա» ժահրի պատճառով, անկում գրանցուած է տնտեսութեան բոլոր ճիւղերուն մէջ. շինարարութեան ոլորտին մէջ՝ 51 տոկոս, ներհայաստանեան առեւտուրի շրջանառութիւնը կրճատուած է 33.1 տոկոսով, ծառայութիւններու ծաւալը (առանց առեւտուրի)՝ 15.9 տոկոսով, արդիւնաբերութիւնը անկում գրանցած է 8.6 տոկոսով, արտահանումը՝ 30.3 տոկոսով, ներմուծումը՝ 27.4 տոկոսով, գիւղատնտեսութեան տուեալները ներկայացուած չեն:*

---

*«Լուսաւոր Հայաստանի» ղեկավար Էտմոն Մարուքեանի եւ «Իմ քայլի» պատգամաւոր Սասուն Միքայէլեանի միջեւ, որ զանգուածային ծեծկռտուքի վերածուեցաւ:*

## «Լուսաւոր Հայաստան»ը կը Դադրեցնէ Պոյքոթը ու կը Մասնակցի Ազգային Ժողովի Նիստերուն

*ՀՀ Ազգային Ժողովը՝ ի դէմ «Իմ քայլի», երաշխիքներ չէ տուած, որ ԱԺ-ի աշխատանքի ծիրէն ներս ընդդիմութեան նկատմամբ բռնութիւն եւ ծեծկռտուք չկրկնուի: Այս մասին Մայիս 25-ին, ԱԺ-ի մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեց «Լուսաւոր Հայաստանի» ղեկավար՝ Էտմոն Մարուքեանը:*

*Մարուքեանի խօսքով՝ կուսակցութիւնը մտադիր է մասնակցելու յառաջիկայ նիստին, որ կը կայանայ վաղը:*

*«Այժմ մենք ուշադիր եւ զգօն կը լինենք, որպէսզի նման բան չկրկնուի»,-ըսաւ ան, նշելով, որ իշխանութիւնները ոչ միայն չեն դատապարտեր տեղի ունեցածը, այլ նաեւ կը խրախուսեն նման պահուածքը:*

*Յիշեցնենք, որ Մայիս 8-ին ԱԺ-ին մէջ միջադէպ տեղի ունեցաւ*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Tel: (626) 797-7680
Massis2@earthlink.net

## Չեխիոյ Ծերակոյտը Միաձայն Ընդունուած Բանաձեւով Դատապարտած Է Հայոց Ցեղասպանութիւնը

*Չեխիոյ Հանրապետութեան խորհրդարանի Սենատը Ծերակոյտը, Մայիս 20-ի երեկոյեան, միաձայն ընդունուած բանաձեւով դատապարտած է Հայոց ցեղասպանութիւնը:*

*Փրակայի մօտ Հայաստանի դեսպանութեան փոխանցումով՝ Սենատի Ծերակոյտի փոխ նախագահ Միլան Շտյեխի հեղինակած բանաձեւը նուիրուած է Երկրորդ համաշխարհային պատերազմի աւարտելու 75-ամեակին եւ երկու համաշխարհային պատերազմներու ընթացքին մարդկութեան դէմ ոճրագործութիւններու, անոնց կարգին՝ մէկուկէս միլիոն հայերու ցեղասպանութեան դատապարտման:*

*Չեխիոյ օրէնսդիր մարմնի ստորին պալատը Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող բանաձեւ ընդունած էր 2017 թուականին:*

## Թուրքիոյ Նախագահի Աշխատակազմէն Արձագանգած են Հայոց Պատրիարքի Նամակին

*Պոլսոյ Հայոց պատրիարք Սահակ արքեպիսկոպոս Մաշալեանը անցեալ շաբաթ նամակ յղած էր Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Էրտողանին համայնքային խնդիրներու շուրջ:*

*Նամակին մէջ Պատրիարքը, յիշատակելով նախագահին հետ Անգարայի մէջ ունեցած հանդիպման ընթացքին ձեռք բերուած համաձայնութիւնը, ուշադրութեան յանձնած էր ազգային-եկեղեցական կեանքին առնչուող օրակարգային հարցերը: Սահակ Պատրիարքը հրատապ համարած էր մասնաւորապէս համայնքային հիմնադրամներու ղեկավար կազմի առկախեալ ընտրութիւններուն հարցը, ինչպէս նաեւ հայկական վարժարաններու առջեւ ծառացած դժուարութիւնները, ակնկալելով պետութեան զօրակցութիւնը:*

*Պոլսոյ «Ժամանակ» օրաթերթի հաղորդումով, նամակի առնչութեամբ նախագահի աշխատակազմէն կապ հաստատած են Պատրիարքի հետ, յայտնելով, որ համաճարակի ճգնաժամի յաղթահարումէն յետոյ լուծում կը տրուի մատնանշուած խնդիրներուն:*

*Պատրիարքարանի դիւանը, իր հերթին, համայնքային շրջանակներուն տեղեկացուցած է, որ ,կարեւոր հարցերը արդէն ամենաբարձր մակարդակի վրայ պատկան մարմիններու օրակարգի վրայ են, անոնց լուծման ուղղութեամբ զգալի է դրական կամքը, եւ կը շարունակուին համապատասխան աշխատանքները:*

## ՄԻԵԴ-ն Վճռած Է

Շարունակուած էջ 1-էն

*իշխանութիւնների կողմից Ռամիլ Սաֆարովի պատիժը չկատարելու համար որեւէ հիմնաւորում չի եղել, նրան անպատիժ են թողել ատելութեան լուրջ յանցագործութեան համար», - նշուած է ՄԻԵԴ-ի վճիռին մէջ:*

*ՄԻԵԴ-ն որոշած է, որ Ատրպէյճանը պէտք է դիմում ներկայացնողներուն՝ Մարգարեանի ծառայակից Մակուչեանին եւ մօրեղբօր՝ Մինասեանին վճարէ 15,143 փունտ սթերլինկ, ծախսերուն համար: Դիմում ներկայացնողները գումարային փոխհատուցում չեն պահանջած, իսկ նշուած գումարը դատական ծախսերն են եւ հայ ու բրիտանացի փաստաբաններու վճարումը:*

*«Մուկուչեան եւ Մինասեան ընդդէմ Ատրպէյճանի եւ Հունգարիոյ» գործը կը վերաբերէր դատապարտուած մարդասպանին տրուած նախագահական ներումին եւ անոր ազատ արձակման, Հունգարիայէն Ատրպէյճան տեղափոխուելէն յետոյ, պատիժին մնացած մասը կրելու համար: 2004 թուականին ատրպէյճանցի զինծառայող Ռամիլ Սաֆարովը սպանած էր հայ զինծառայողը եւ փորձած էր սպաննել եւս մէկը, երբ Հունգարիոյ մէջ կը մասնակցէին վերապատրաստման դասընթացքներու:*

*Գործը նաեւ կը վերաբերի այն փաստին, որ Ատրպէյճան, արտայանձնումէն յետոյ, Ռամիլ Սաֆարովը դիմաւորած է որպէս հերոս: Դատարանը գտած է, չնայած որ Ատրպէյճանը յստակօրէն համաձայն էր Սաֆարովի գործողութիւններուն, ոչ միայն զինք ազատ արձակելով, այլեւ խրախուսելով, տալով չվճարուած աշխատավարձը եւ անոր վերադարձէն յետոյ բնակարան նուիրելով, այդուամենայնիւ, Ատրպէյճանը պատասխանատուութիւն չի կրնար կրել միջազգային օրէնքի խստագոյն չափանիշներու համաձայն, որմով կը պահանջուի, որ պետութիւնը «ճանաչի» այդ գործողութիւնները «իբրեւ իր գործողութիւններ»:*

*«Աւելին, այդ գործողութիւնները եղել են մասնաւոր որոշման մի մաս եւ եղել են այնպիսի աղաղակող բռնարարքներ եւ այդքան հեռու զինծառայողի պաշտօնական կարգավիճակից, որ Դատարանը չկարողացաւ տեսնել, թէ ինչպէս կարող էին նրա հրամանատարները կանխատեսել, կամ ինչպէս կարող էր Ատրպէյճանը պատասխանատու լինել դրանց համար պարզապէս այն պատճառով, որ նա պետական ծառայող էր»,- նաեւ նշուած է ՄԻԵԴ վճիռին մէջ:*

*Այնուամենայնիւ, ՄԻԵԴ-ն գտած է, որ Ատրպէյճանի իշխանութիւններու կողմէն Ռամիլ Սաֆարովի պատիժը չկատարելու եւ ատելութեան լուրջ յանցագործութեան համար անպատժելիութիւն շնորհելու համար որեւէ հիմնաւորում չէ եղած: Աւելին, դատաւորները նկատած են, որ դիմում ներկայացնողները տրամադրած են բաւարար ապացոյցներ, որպէսզի ցոյց տան, որ Ռամիլ Սաֆարովի ներումը եւ անոր շնորհուած այլ միջոցները ընտրուած են ցեղային դրդապատճառներով, այն է՝ իր արարքին աջակցող բարձրաստիճան պաշտօնեաներու յայտարարութիւնները (մասնաւորապէս, այն փաստը, որ յանցանքը ուղղուած էր ընդդէմ հայ զինուորներուն), ինչպէս նաեւ Սաֆարովին նուիրուած յատուկ էջը Ատրպէյճանի նախագահի կայքին մէջ:*

## Կը Նշենք Սարդարապատի Հերոսամարտը

Շարունակուած էջ 1-էն

ամեակին առթիւ:

Այս առթիւ կ՚արժէ մէջբերել բազմաթիւ վկայութիւններէն մի քանին, որոնք ամփոփուած են Տօքթ. Ճէրէճեանի աշխատասիրութեան մէջ:

Հայկական Բանակի պաշտօնաթերթ «Ռազմիկի» մէջ Սարդարապատի ճակատամարտի մասնակիցներէն Վարազդատ Թռչունեան գրած է.«Մեր թնդանօթները մեր շղթայի հետեւից ռմբակոծում էին թուրքերին, Պանդուխտը իր 200 հոգի մշեցի ձիաւորներով աջից հարուածում էր օսմանցիներին, խլել էր նրանցից մի թնդանօթ եւ գերի վերցրել 4 օսմանցի սպայ: Սարդարապատի մօտ գլխաւոր շղթան առանց մի գնդակ արձակելու եւ առանց մի զոհ տալու մօտեցաւ բլուրին, թուրքերը սարսափած, փախան, թողնելով դիակներ եւ բազմաթիւ վիրաւորներ…:

Սարդարապատի Զօրաջոկատի սպայակոյտի պետ ռուսական բանակի սպայ, Ֆրանսական ծագումով Ալեքսանդր Շենուէր իր ռուսերէն լեզուով զեկուցագրին մէջ, Մայիս 27-ի մարտական գործողութիւններու մասին պատմած է. «Մեր հեծելազօրը կը հետապնդէ անոնց: Ձախ զօրասիւնը հետապնդելով թուրքերուն, երկաթուղագիծի երկայնքով կը գրաւէ Արաքս կայարանը եւ Մաստարա կիսակայարանը: Աջ զօրասիւնը, որուն մէջ մտած էր Երզնկայի գունդը, երեկոյեան կը մօտենայ Մաստարա գիւղին: Պանդուխտի հեծեալները կը շարունակեն հետապնդել թշնամին Կրիզուլի եւ Գիւզլուի ուղղութեամբ եւ Մայիս 28-ին կը հասնին Սոգիւթլու: Այստեղ Պանդուխտի ջանքերով կը կազմակերպուի 1000 հոգինոց փարթիզանական ջոկատ: Թուրքերը կ՛իյնան խուճապի մէջ: Անոնց գումարտակները կ՚անցնին Արփաչայի արեւմտեան ափը: Թրքական ջոկատներուն միջեւ կապը կը կտրուի եւ անոնք կը զրկուին ուտելիքէն եւ ջուրէն: Մայիս 28-ին Սարդարապատի ջոկատի զօրամասերը կը գրաւեն Կարա-Պուրունը, Ներքին եւ Վերին Թալինը»:

Վերջին մէջբերում մը եւս, Դաշնակցական յայտնի գործիչ Վարանդ Փափազեանէն, որ Կուսակցութեան Լիբանանի պաշտօնաթերթ «Ազդակ» օրաթերթի 1988-ի, Մայիս 28-ի բացառիկ թիւին մէջ կը գրէ. «Իսկ եթէ ճիշդ է որ, Սարդարապատի (եւ Հայ ժողովուրդի) ճակատագիրը ճշդեց հնչակեան Պանդուխտը, այդ պարագային պէտք է հիմնաւորել այս արտայայտութիւնը, որպէսզի հայ ժողովուրդը, իր բոլո՛ր զաւակներով, կանգնեցնէ անոր արձանը եւ խոնարհի անոր առջեւ»:

Պանդուխտ եւ իր ընկերները 1915 թուականին ձգելով Ամերիկայի ապահով պայմանները վերադարձան Երկիր, ուր տարբեր շրջաններէ հաւաքուած Հնչակեան կամաւորներով կազմեցին 6-րդ գունդը, մասնակցեցան ինքնապաշտպանական մարտնչումներուն: Հետագային անոնք Սարդարապատի հերոսամարտի յաղթանակի իրագործման մէջ ունենան կարեւոր ներդրում, որուն համար արժանի են համազգային յարգանքի:

Այս օրերուն դարձեալ կը խոնարհինք յիշատակին առջեւ՝ Սարդարապատի յաղթանակը կերտող մեր ժողովուրդի բոլոր հերոսներուն, որոնց սխրագործութիւններուն կը պարտինք Հայաստանի ներկայ անկախ Հանրապետութեան գոյութիւնը:

**«ՄԱՍԻՍ»**

## ՀԿԲՄ-ի Միջոցաւ Սննդամթերքի Բաշխում




Շարունակուած էջ 1-էն

*թերքի բաշխման գործընթացը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, Մայիս 23-ի առաւօտեան ժամը 9-էն սկսեալ՝ ՀԿԲՄ-ի կեդրոնին առջեւ:*

*Նախատեսուած ժամերուն հարիւրաւոր կարիքաւորներ փութացած էին սննդամթերքի բաշխման կեդրոնը: Անոնք ստացան յատկապէս պատրաստուած ծրարներ, որոնք կը պարունակէին դաշտային թարմ բանջարեղէն, պահածոներ, պտուղ եւ հաց: Երթեւեկի դժուարութիւն ունեցողներուն համար, յատուկ կամաւորներու միջոցաւ, սննդամթերքի առաքումը փոխանցուեցաւ ենթականերուն բնակարանները:*

*Այս առթիւ կ՚արժէ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել սոյն նախաձեռնութեան մատակարարումը նիւթապէս հովանաւորող՝ միջին արեւելքէն տարիներ առաջ այստեղ հաստատուած այն ազնիւ հայ ընտանիքի անդամներուն, որոնք խնդրեցին չհրատարակել իրենց անունը:*

*Արդարեւ, մարդասիրական գովելի նախաձեռնութիւն մըն էր այս, որմէ օգտուեցան դժուարութիւններու առջեւ յայտնուած՝ հայեր ու տեղացիներ հաւասարապէս:*

# ԴԷՊԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ



*Անծանօթ անուն մը պիտի մնար կամ աննշան գիւղ մը քարտէզի վրայ, եթէ դէպքերու բերումով ան չդառնար անկիւնադարձը մեր նոր պատմութեան: Ո՞վ պիտի մտաբերէր կամ հետաքրքրուէր Սարդարապատ տեղանունով, եթէ 1918 Մայիս 22-26-ին հոն կանգ չառնէին եւ ապա գլխակորոյս չփախչէին Թրքական զօռ վաշտերը կատաղի:*

*Ճակատամարտերու ճակատագիրն է ըլլալու յաղթական կամ պարտեալ: Սակայն անոնցմէ քիչերն են որ կը վերածուին խորհրդանիշերու՝ դառնալով վկայագիրը ժողովուրդներու յարատեւման: Այդ ճակատամարտերը, բնականաբար, ռազմական գործողութիւններ են՝ զինուորական հմտութեամբ. բայց երբ ժողովուրդ մ'ամբողջ կը վերածուի բանակի, երբ մարտական բախումներէ աւելի իր վճռորոշ խօսքը կ'ունենայ ոգին ու պատգամը, ապա չենք կրնար չխոնարհիլ այդ սխրանքը կոթողած բոլոր հերոսներու յիշատակին ընդառաջ: Սարդարապատի հերոսամարտը ազդանշանն էր հայոց վերածնունդին:*

*1918-ի մայիսեան հերոսամարտերը, պատմութեան հոլովոյթին մէջ, առանձին դրուագ մը չէ բնաւ: Անոնք հայաջնջման ծրագիրին դէմ համաժողովրդային ընդվզումներ հանդիսացան: Թրքական տեւապէս որոճացող հայահալած դիւային ծրագիրը, որ յաջորդաբար ի գործ դրուած էր պատմական Հայաստանի, Կիլիկիոյ եւ հայաբնակ այլ օճախներու դէմ, նանիր պատրանքը ունէր, որ այդ կարելի է սանձարձակ օրէն շարունակել Արեւելեան Հայաստանի, Արցախի, Զանգեզուրի թէ Ջաւախքի ուղղութեամբ եւս: Օր ըստ օրէ օղակուող եւ կծկուող հայութիւնն ու Հայաստանը, ըստ օսմանեան երեւակայութեան, վերջապէս պիտի չքանար ի սպառ..., եթէ՝ ի հակէ վեհիպ փաշայի զօրքերը Պաշ Ապարանի, Ղարաքիլիսայի եւ Սարդարապատի մէջ չստանային ուժգին հակահարուած հայոց մարտիկներուն կողմէ:*

*Արդէն մահու կենաց բնոյթ ստացած հայ-թրքական հերթական գօտեմարտին վայրը հանդիսացաւ Սարդարապատը: Այդ իրողութեան իրազեկ էին ռազմիկներուն չափ ժողովուրդին բոլոր շերտերը, որոնք անսալով էջմիածնի ահազանգող ղօղանջներուն խորիմաստ պատգամներուն, գիտակից պահուն լրջութեան, չտատամսեցան ուղղուելու դէպի Սարդարապատ՝ ոգի ի բռին պատուար կանգնելու լկտիացած թրքական սուիններուն դիմաց:*

*Օրուան օրհասականութիւնը կարելի է ընկալել ընթերցելով երեւանեան զօրամասի հրամանատար, զօրավար Մովսէս Սիլիկեանի սրտառուչ կոչէն կարգ մը հատուածներ.*

*«Հասել է րոպէն, իւրաքանչիւր հայ, մոռանալով իր անձնականը, յանուն Մեծ գործի՝ հայրենիքի փրկութեան եւ իր կնոջ ու աղջիկների պատուի պաշտպանութեան, պիտի գործ դնի իր վերջին ճիգը թշնամուն հարուածելու համար:*

*Բայց քանի որ պիտի ոչնչանանք, աւելի լաւ չէ՞, որ զէնքը ձեռներիս փորձենք մեզ պաշտպանելու: Գուցէ յաջողւում է մեզ արգելել թշնամուն իր դիւային ծրագիրը իրագործելու, գուցէ յաջողւում է մեզ կռւով ձեռք բերել ապրելու իրաւունքը:*

*Հարկաւոր է մի ճիգ եւս եւ թշնամին վռնտուած կը լինի մեր երկրի սահմաններից, ուր մեր պապերն ու հայրերը երկար տարիներ արիւն քրտինքով աշխատել են, գէթ մի կերպ հայթայթել իրանց օրուան ապրուստը:*

*Հայե՛ր, ժամանակ չէ դանդաղելու: Խորին կերպով համոզուած եմ, որ այս իմ կոչը անարձագանգ չի մնայ եւ երկու-երեք օրուան ընթացքում կը կազմակերպուի մի այնպիսի քաջարի զօրաբանակ, որին կը յաջողուի վռնտել թշնամուն հայրենի հողի սահմաններից եւ ապահովել հայ ժողովրդի գոյութիւնը:*

*Յանուն բազմաչարչար հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան,*

*Յանուն ոտնակոխ եղած ճշմարտութեան, ոտքի կանգնեցէք: Դէպի գործ, դէպի սրբազան պատերազմ»:*

*Սարդարապատի մէջ ընթացող հայ-թրքական զինական ընդհարու մի օրն բուն, երբ կը ղօղանջէին սթափութեան եւ զգաստութեան զանգերը հայ եկեղեցիներու զանգակատուներէն, կարծէք պատմութեան անցեալէն կ'արձագանգէին անոնք՝ դէպի գալիք դարերը խոյանալու համար: Որովհետեւ անոր մէջ կար խորհրդաւոր պատգամ մը՝ սերունդներուն թելադրելի. «սերունդներ, դուք ձեզ ճանաչէք Սարդարապատից»:*

*Այդ պատգամը կարելի է խտացնել այսպէս.- ո՛վ ժողովուրդ, քու գոյատեւման իրաւունքին գրաւականը ազգային միասնականութիւնն է, միաբռունցք ծառացումը ոչ միայն անարգ ոսոխին դէմ, այլեւ՝ ամէն տեսակի վտանգներու ընթացքին: Մի՞թէ մեր բոլոր հերոսամարտերը չմղուեցան նոյնպիսի կարգախօսներու ներքեւ:*

*Այդ փոթորկայոյզ օրերուն դէպի Սարդարապատ ուղղուեցան հոգեւորականներ ու կանայք, զինուորականներ ու մահապարտներ, կամաւորներ թէ ինքնակամ հայորդիք, քանզի թուլակամութիւնն ու վեհերոտութիւնը համազօր էին հաւաքական անձնասպանութեան: Եւ հետեւաբար՝ գլխովին փշրեցին եաթաղանը օսմանեան:*

*Այդ թէժ կռիւներուն, իր նշանակալից դերակատարութեամբ, սխրալի արարքով, պատերազմին յաղթական ելքին նպաստեց հնչակեան հեծեալ գունդը մշեցի Պանդուխտի դիպուկ եւ ճակատագրական շրջանցումով: Զօրավար Անդրանիկի ռազմական ուղիին բովէն անցած, անոր մօտ թրծուած Միքայէլ Սէրեան (Պանդուխտ) կարողացաւ օղակել հակառակորդը եւ արժանի հարուածով չէզոքացնել անոր թիկունքը: Զինուորական մասնագէտներ բարձր գնահատեցին անոր մտայղացումն ու ընտրած պահը:*

*Իսկ ժողովրդային յիշողութեան մէջ, Պանդուխտի յարձակման վայրն ու բարձունքը կոչուեցաւ Պանդուխտի անունով:*

*Նշելի է որ այդ բուռն մարտերուն, հայոց կողքին, նոյն խրամատներու ետին էին ռուս, ֆրանսացի, յոյն զինուորականներ, եզիտի կամաւորներ, իրենց զօրակցութիւնը արտայայտելու հայոց վճռական գօտեմարտի ընթացքին:*

*Սարդարապատը հիմնաքարը հանդիսացաւ Հայաստա նի առաջին հանրապետութեան՝ բանալով նոր էջ մը հայոց պատմութեան մէջ: Դէպի Սարդարապատ ծովացած ժողովուրդը հիմքը դրաւ մերօրեայ հայրենիքին, որ ահա յառնած ու կանգնած է արժանավայել ներկայութեամբ: 70 տարի ետք, Արցախի մէջ բռնկած պատերազմը նոր Սարդարապատ մըն էր: Այդ տարածքին մարտերուն մէջ հերոսացող կամաւորներ, Սարդարապատի ոգիով՝ «դէպի Արցախ» կը յանկերգէին: Նոր ղօղանջներ կը լսուէին, այս անգամ Հայաստանի արեւելքէն՝ Արցախի սարերէն:*

*Սարդարապատի անունը աւելի շքեղացաւ, երբ սովական վայր ըլլալէ յետոյ դարձաւ համազգային ուխտատեղի:*

# Ժողովուրդների «Հայր» Ստալինի Յոբելեանը
# Հայրիկիս՝ Յակոբ Անասեանի Յիշատակին, Ծննդեան Օրուայ Առթիւ

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

*1947 Թուականի դրամափոխութիւնից յետոյ, Խորհրդային երկրի «Հայր» Ստալինը յաջորդաբար, մի քանի տարի շարունակ, լայն սպառման ապրանքների, ի մասնաւորի սննդամթերքի գների իջեցում էր իրականացնում, որը, թէեւ հիմնականում ոչինչ չէր փոխում ժողովրդի կենսամակարդակի մէջ, այնուայնդերձ մեծ խանդավառութիւն էր առաջ բերում ողջ երկրի լայն շրջանակներում:*

*1949-ը Թուականը մեծ իրադարձութիւնների տարի էր: Հայրիկս գնում-գալիս էր՝ չգիտէինք թէ ուր, բայց գնալով մռայլ տեսք էր ստանում Նրա դէմքի արտայայտութիւնը: Մի օր էլ, երբ երկուսով էինք տանը՝ ասաց.*

*- Հենրիկ, տղաս, ես այսօր երեկոյեան կարեւոր տեղ եմ գնալու, եթէ պատահի, որ մէկ-երկու օրից չվերադառնամ, երրորդ օրը, ա՜յ... էն նկարի ետեւում մի ծրար կայ,- ցոյց տուեց Ֆրանսիայից բերած, պատից կախուած (*Այդ նկարը ներկայիս ամրացուած է իմ աշխատասենեակի Հարաւային պատին,- ՀԵՆ. Ա.*) նկարը եւ ասաց.*

*- Երբ մի քիչ էլ մեծանաս, առանց բացելու ծրարը, ինչ որ ձեւով կ'ուղարկես արտասահման: Հարց չտաս: Խօստացիր, որ մօրդ եւ եղբօրդ ոչինչ չես ասի այս մասին:*

*Անշուշտ խոստացայ, սակայն տարակուսանք ապրեցի այն մտածումով, թէ ինչո՞ւ հայրս իմ տասնութ տարեկան աւագ եղբորս չի վստահում նման կարեւոր յանձնարարութիւն, այլ վստահում է ինձ՝տասներկուամեայ մանչուկիս:*

*Հետագայում՝ ինչա՜րկէ հասկացայ: Եղբայրս միամիտ, ծայրայեղ ազնիւ մի տղայ էր, Ֆրանսիայում ծնուած, նոյնքան ծայրայեղ անփորձ, հազիւ թէ նա կարողանար պահել այդ գաղտնիքը: Մշտապէս ես էի նրան օգնութեան հասնում փողոցային «մարտերի» ժամանակ: Հայրս հիանալիօրէն գիտէր այս ամէնը:*

*Երրորդ օրը հայրս տուն եկաւ փոքր ինչ պայծառացած: Յստակ էր. ինչ որ բան էր փոխուել նրա կեանքում:*

*Հետաքրքրութիւնից դրդուած, պատեհ մի ժամի փորձեցի հայրիկիս մատնանշած նկարի ետեւի ծրարը նայել, բայց այնտեղ ոչինչ չկար: Այդպէս էլ, առ այսօր ես չգիտեմ թէ ինչ էր պարփակուած այդ ծրարի մէջ, եւ թէ ինչու էր հայրս մեզնից գաղտնի պահում ծրարի բովանդակութեանը: Հասուն տարիքում անգամ ես ինձ թոյլ չեմ տուել յիշեցնել նրան այդ դէպքի մասին:*

*Պարզուեց, որ Ակադեմիայի Պատմութեան ինստիտուտի ակադեմիկոսներ Աբգար Յովհաննիսեանն ու Մորուս Հասրաթեանը հետաքրքրուած են եղել հօրս ճակատագրով:*

*Բազում միջնորդութիւններով եւ իրենց ստորագրութիւններով ամրագրուած երաշխաւորագրերով, նրանք կարողացել էին բացատրել պետական իշխանական մարմիններին (KGB) պատերազմի ժամանակ Նրա գերի լինելու հանգամանքները, եւ Նրա գիտական մեծ պաշար ունենալու փաստը, եւ ըստ այնմ էլ, Նրանց յաջողուել էր աշխատանքի տեղ ապահովել հայրիկիս համար՝ Ակադեմիայի Պատմութեան ինստիտուտում:*



*Մօտենում էր «Մեծ առաջնորդ» Ստալինի ծննդեան 75-ամեակը: Ողջ Խորհրդային երկիրը ողողուած էր միլիոնաւոր պաստառներով, թռուցիկներով, Ստալինի մեծադիր նկարներով, քանդակներով, արձաններով:*

*Խորհրդային Հայաստանն էլ «որոշել» էր «Պողպատէ մարդուն» (*Գուսան Հաւասու բնութագրումն է,- ՀԵՆ. Ա.*) իր երախտագիտութիւնը յայտնել՝ Երեւանի բարձունքում, Յաղթանակի զբոսայգում կանգնեցնելով նրա վիթխարի արձանը:*

*Դեկտեմբերեան այդ ցրտաշունչ օրը, հարիւր հազարաւոր մարդկանց ստիպողաբար տարել էին Յաղթանակի զբոսայգի՝ Ստալինի արձանի բացմանը ներկայ լինելու համար: Հայրիկս էլ, պարտաւորուած, որպէս գիտական մտքի ներկայացուցիչ, պարտաւոր էր ներկայ լինել այդ միջոցառմանը: Ընդառաջելով իմ խնդրանքին, հայրիկս ինձ էլ տարաւ իր հետ:*

*Երանի տարած չլինէր: Ահաւոր սառնամանիքի պայմաններում, մժեղի պէս իրար գլխի հաւաքուած ամբոխը, ժամեր շարունակ լսում էր «Մեծ Առաջնորդին» աստուածացնելու մէջ մրցումի ելած ճառախօսների հազարումի համեմատութծօիններով լի ելոյթները:*

*- Հայրի՜կ, ոտքերս սառել են, փայտացել, էլ չեմ դիմանում, արի գնանք,- ասում էի նրան ու հետոն էլ լաց լինում:*

*- Ոչի՜նչ տղաս, դիմացիր, քիչ մնաց,- անզօրութիւնից չիմանալով ինչ անել,- ասում էր հայրիկս:*

*Ես այդ ժամանակ չէի հասկանում, թէ ինչու հայրիկըս չէր կարող հեռանալ, երբ այս ծովածաւալ ամբոխի մէջ «շունը տիրոջը չէր ճանաչում.: Այդ յետոյ էր, որ ես հասկացայ, թէ հայրս ինչու չէր կարող միտինգը կիսատ թողնել ու տուն տանել սառնամանիքից կուչ եկած իր տասներկուամեայ որդուն:*

*Դրանք այն տարիներն էին, երբ մարդիկ վախենում էին նոյնիսկ սեփական տանը իրենց մտքերն ազատօրէն արտայայտել:*

*Այսօր ծայրայեղութիւն կարելի է համարել այն իրական դէպքերը, երբ որդին մատնում էր հօրը եւ հակառակը: Մարդկանց շուրջը վխտում էին լրտեսները:*

*Տարիներ անց, հայրիկս պատմում էր իրական մի դէպք, որը տեղի էր ունեցել Ակադեմիայի Պատմութեան ինստիտուտում՝ Ստալինի յոբելեանի օրերին:*

*Ինչպէս բոլոր հիմնարկներում ու հաստատութիւններում, յիշեալ ինստիտուտում էլ են պատրաստւում ըստ արժանւոյն դիմաւորել Մեծ Առաջնորդի յոբելեանը: Հիմնարկի կուսկազմակերպութեան քարտուղարը կարգադրութիւններ է անում տարբեր պաստառներով, կոչերով զարդարելու համար միջանցքի պատերը:*

*Քաղաքի յայտնի նկարիչներից մէկը նկարել է Ստալինի դիմանկարը, բաւականին խոշոր իւղաներկ մի նկար, որը պիտի փակցուէր միջանցքի ամենատեսանելի տեղում, որպէսզի ամէն ոք, միջանցք մտնելիս եւ դուրս գալիս տեսնի առաջնորդին:*

*Հաւաքւում են մի քանի կուսակցականներ եւ որոշում, թէ որտեղ պիտի կախուի Առաջնորդի շքեղ շրջանակով մեծադիր իւղաներկ նկարը: Բերում են մի հին, ձեռքից բաց թողնում նկարը, որի արդիւնքում ջարդուփշուր է լինում գեղեցիկ, թանկարժէք շրջանակը:*

*- Լսեցի՞ք..., լսեցի՞ք թէ ինչ ասաց..., վրայ է տալիս կուսակցութեան քարտուղարը,- նա մեր մեծ առաջնորդին ասաց՝ «հերդ եմ անիծել»: Բոլորդ լսեցիք, բոլորդ ականատես էք, այդպէս չէ՞...:*

*Ո՞վ կը համարձակուէր հակառակն ապացուցել, որ բոլորս էլ կարող էինք նման արտայայտութիւն թոյլ տալ առանց որեւէ մէկին նկատի ունենալու, երբ հանկարծակի, անիմաստ ցաւի տէր ենք դառնում, կամ ինչոր մի բան մեր ուզածի պէս չի ստացւում:*

*- Պարոն Սաղաթէլեան..., ուզում է ինչ որ բան ասել մի բուռ դառած մտաւորականը, բայց նրան ընդհատում է կուսակցութեան քարտուղարը.*

*- Ի՞նչ Պարոն, ընկեր Զամչեան, դուք դեռ Նեղոսի ափի՞ն*



*կոտրած-թափած աստճան: Կերածխմած ներկաներից ոչ ոք չի համարձակւում նրա վրայ բարձրանալ:*

*- Կանչէք Զամչեանին, նա թեթեւ է, իր համար հեշտ կը լինի բարձրանալ,- ասում է կուսակցութեան քարտուղարը:*

*Կանչում են կրտսէր գիտաշխատող եգիպտահայ մտաւորականին: Վերջինս վախով-դողով բարձրանում է օրորուող աստիճանի վրայ եւ փորձում երկաթէ կեռի վրայ կախել առաջնորդի նկարը: Մի քանի անյաջող փորձերից յետոյ, յանկարծ ձեռքից բաց է թողնում նկարը, որն ընկնում է ծնկի վրայ՝ ամեհի ցաւ պատճառելով իրեն:*

*-Վա՜խ..., հերն եմ անիծեր..., աս ի՜նչ սոսկալի ցաւ է,- անգիտակցաբար ձեռքը տանելով ծնկին,- ասում է խեղճ մտաւորականը եւ*

*էք..., աշխատում էք մի գիտական հիմնարկում եւ դեռ չէք սովորել «ընկեր» ասել: Լաւ, թողնենք այս ամէնը եւ անցնենք գործի: Ընկեր Մովսիսեան,- դիմելով իր օգնականին՝ շարունակում է իր խօսքը կուսքարտուղարը,- շտապ կուսակցական ժողով հրաւիրէք՝ քննելու համար ընկեր Զամչեանի հարցը:*

*- Ընկեր Սաղաթէլեան, ի՞նչ հարց կ'ուզէք քննել, ես ի՞նչ յանցանք գործած եմ: Սովորական, ժողովրդական արտայայտութիւն է, ամէն մարդ կը գործածէ՝ «Հերն եմ անիծեր», «Խերն եմ անիծեր», երբ հանկարծակի, անսպասելի ցաւ մը կ'զգայ, կամ որեւէ դէպքէն յուսախաբ կ'ըլլայ: Խօսք էր՝ անցաւ, գնաց: Ինչո՞ւ պատմութիւն կը շինէք:*

*- Հլա մի սրան լսէք ընկեր-*

Շար.ը էջ 18

# Պատանիի մը Տպաւորութիւնը
# Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոս Յովսէփեանց Վտանգալից Ճամբորդութիւն Դէպի Անթիլիաս 1945 Յունուար-Մարտ

ԴՈԿՏ. Տ. ԶԱՒԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

### Համաշխարհային Բ Պատերազմը

*Համաշխարհային Երկրորդ Պատերազմի վտանգալից օրերուն, ուղիղ երկու ամիս տեւողութեամբ, 1945 Յունուար 21-էն Մարտ 23, մեր նախորդ սերունդի մեծանուն Հայրապետ Տ.Տ. Գարեգին Ա Յովսէփեանց ծովու ճամբով Նիւ Եորքէն Լիբանան պիտի մեկնէր որպէս Ընտրեալ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, 1938 թուականէն ի վեր վարելէ ետք Ամերիկայի Արեւելեան Թեմին Առաջնորդութիւնը: Առաջին ամսուն տաժանելի ճամբորդութիւն մը վերապահուած էր Մեծ Հայրապետին որուն կ՚ընկերանար Դերենիկ վարդապետ Փոլատեան, որ իր ուսման աւարտին կը վերադառնար Անթիլիաս: Երկրորդ ամսուն Հայրապետը ցամաքի ճամբով եւ խաղաղ պայման- ներու մէջ հայ գաղութներ այցելելէ ետք կը հասնէր Անթիլիաս:*

*Պատերազմի արհաւիրքի այդ օրերուն երկուքը կը բարձրանային Ուաշինկթըն Օլսթըն անուն բեռնատար շոգենաւը կտրելու համար Ատլանտեան ովկիանոսն ու Միջերկրական ծովը, մինչ Նիւ Եորքի նաւամատոյցը ողջերթի եկած էին Տիրայր Արքեպս. Տ. Յովհաննէսեան, Թեմական իշխանութեանց վարչականներն ու հայահոծ բազմութիւն մը: Յարմարութիւններ չունեցող եւ պատերազմին ենթակայ ըլլալու նաւը արկածալից եւ երկար մէկ ամսուան ճամբորդութիւն մը կը վերապահէր 78-ամեայ Հայրապետին եւ իր ընկերակից վարդապետին, որոնց փոքրիկ սենեակ մը տրամադրած էին շոգենաւի սպաներու յարկաբաժնին մէջ: Շոգենաւը մաս կը կազմէր 86 այլ շոգենաւերու խումբի մը՝ բոլորն ալ զինուոր եւ զինամթերք փոխադրող:*

### Յունուար 26-ի Սաստիկ Ալեկոծութիւնը Հայրապետին Աղօթքը

*Շոգենաւին վրայ կային նաեւ օտար հոգեւորական մը եւ երկու սուսուցիչներ որոնք դէպի Միջին եւ Ծայրագոյն Արեւելք կը ճամբորդէին: Գարեգին Ընտրեալ Կաթողիկոսը անոնց կողմէ ճանչցուեցաւ որպէս «սուրբ մարդ» երբ լսեցին անոր «Պահպանիչ» աղօթքը հայերէն եւ անգլերէն լեզուներով որպէս Աստուծոյ Պահապան Աջը թշնամի հաւանական թնդանօթներուն դէմ: Յունուար 26-ի Ուրբաթ օր, կը գրէ Դերենիկ վարդապետ իր «Յուշեր»ուն մէջ, ճամբորդներ սաստիկ ալեկոծութեան մատնուեցան, նաւեր իրար բախեցան, եւ նոյնիսկ «մեր շոգենաւը իր ետեւի նաւուն զարնուելով գէշ կերպով վնասուեցաւ»: Իսկ Փետրուար 5-ին աւելի վատը պատահեցաւ, երբ Ատլանտեան ովկիանոսի վրայ թշնամի ընդծովեաներ յարձակում գործեցին Ուշինկթըն Օլսթըն «մեր շոգենաւին վրայ»:*

*Գարեգին Հայրապետ մտահոգուած իր ձեռքի պայուսակէն փոքրիկ ձեռագիր մատեան մը եւ վարդապետական խաչը հանելով՝ «սրանց հետ միասին իջնեմ ովկիանոսի անդունդը» կ՚աղօթէր: Ամենուրեք իրարանցում, հրացանաձգութիւն եւ սարսափ կը տիրէր այդ օր, եւ սակայն կէսօրուան ժամուն ժամանակաւոր կերպով խաղաղութիւն տիրեց, եւ գիտնական, ու ձեռագրագէտ բանասէր «Սրբազանը ամբողջ օրը գրչագիր մատեանը ձեռքերուն մէջ կը թղթատէր ու կը կարդար»: Հրաշագործ Հայրապետի աղօթքով շոգենաւը պիտի հասնէր Ճիպրալթարի նեղուցը ուրկէ ապահով պիտի անցնէին Միջերկրական ծով:*



### Փետրուար 8 Վարդանանց Տօն

*Վարդանանց Հինգշաբթի օրը վերջապէս շոգենաւը Ճիպրալթարի նեղուցէն դէպի Միջերկրական ծով պիտի անցնէր, այս անգամ միայն իրենց շոգենաւով առանձինն, քանի միւս նաւերը այլ ուղղութեամբ երթալով բաժնուած էին խումբէն: Այդ պատճառով, կը գրէ Դերենիկ վարդապետ, ճամբորդներուն պաշտօններ տրուեցան ինքնապաշտպանութեան համար: Դերենիկ վարդապետի պաշտօնն էր «արագահարուածը փամփուշտով լեցնել», իսկ Հայրապետին կը մնար աղօթել Տիրոջ ողորմութիւնը հայցելով: Նոյն օր Վարդանանց յիշատակին, Հայրապետն ու վարդապետը «Նորահրաշ» շարականը երգեցին եւ գոհաբանական աղօթք մատուցին զինուորներուն եւ ճամբորդներուն ներկայութեան, որոնց Դերենիկ վարդապետ իր կազմած հայերէն եւ անգլերէն համառօտ աղօթագիրքէն օրինակներ բաժնեց անոնց: Ամերիկացի քարոզիչը «Աստուած լսեց հայոց ծերունի արքեպիսկոպոսին աղօթքը» ըսելով անվտանգ անցած էին երկար եւ վտանգալից օրերէն, երբ շոգենաւը Ալճերիոյ Օրան նաւահանգիստը մնաց երեք օր:*

*Գիտնական Գարեգին Հայրապետը այդ անծանօթ քաղաքը իջեցուցին զինուորական ինքնաշարժով ու բարձրացուցին այն լերան կատարը ուր կար Սուրբ Խաչ անունով հին վանք մը: Սրբազանը հետաքրքրութեամբ նկատեց որ ան 14-րդ դարու հայկական տաճարներուն նման կառոյց մըն էր եւ փափաքեցաւ վանքին տանիքը բարձրանալ հակառակ տրուած զգուշացումներուն: Սրբազանը մագլցեցաւ, կը գրէ Դերենիկ վարդապետ, եւ կատարեց իր խուզարկու- թիւնները եւ սպաներու օգնութեամբ ապահով իջաւ վար դէպի շոգենաւը: Մի քանի օրեր ետք, Փետրուար 21-ին, ճիշդ ամիս մը ետք, կը հասնէին Եգիպտոսի Փորթ Սայիտ նաւահանգիստը ուր կը դիմաւորուէին Եգիպտահայ Թեմի Առաջնորդ Մամբրէ Արքեպիսկոպոս Սիրունեանէ որ Ընտրեալ Կաթողիկոսն ու Դերենիկ վարդապետը կ՚առաջնորդէր երկաթուղիի կայարանը ուղղուելու դէպի Գահիրէ, երեք ժամուան գնացքով մը:*

### Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Մէջ Ականատես Պատանիին Տպաւորութիւնը

*Փետրուարի կիսուն էր երբ տողերս գրողը, Դանիէլ Արզումանեան, տասնեւմէկ տարեկան պատանի եւ Գալուստեան Ազգային Վարժարանի երրորդ կարգի աշակերտ, մի քանի դասարան- ներու աշակերտութեան հետ միասին Ընտրեալ Հայրապետին ընդառաջ խմբովին եկեղեցի դիմաւորութեան պիտի երթայինք մեր ուսուցիչներուն հետ: Շատ լաւ կը յիշեմ մեր երգի ուսուցիչն ու մայր եկեղեցւոյ դպրապետը Ղազարոս Ղազարոսեան մեզի սորվեցուցած էր «Կիլիկիա» հոգեթով երգը զոր պիտի երգէինք շրջաբակին մէջ Գարեգին Հայրապետի եկեղեցի մուտքին: Կը սպասէինք եկեղեցւոյ բակը, երբ ինքնաշարժերը հասան ու պատկառելի թափօր մը կազմուեցաւ գլխաւորութեամբ Գարեգին Ընտրեալ Կաթողիկոսին, որուն կից Դերենիկ վարդապետն ու քահա-նայից դասը՝ հանդիսաւոր կը յառաջանային դէպի եկեղեցւոյ մուտքը:*

*Երգեցինք «Երբոր բացուին դռներն յուսոյ» երգը, երբ առաջին անգամն ըլլալով Կաթողիկոս մը կը տեսնէինք, որ եկեղեցի մուտք գործելով եւ Առաջնորդ Սրբազանի բարի գալստեան ջերմ խօսքերով բեմ կը բարձրանար տալու համար իր հայրական պատգամը: Հասակով ոչ բարձր եւ սակայն իր կրակոտ ճառով Հայրապետը կը խօսէր, եւ անշուշտ մենք բան չէինք հասկնար այդ տարիքին: Մտքէս կ՚անցնէ՞ր արդեօք թէ չորսուկէս տարի ետք, 1949 Սեպտեմբերին, իմ քայլերը դէպի նոյն Հայրապետը պիտի ուղղուէին որուն հայրական շունչին տակ ծնկաչոք Անթիլիասի Դպրեվանք ուսանէի եւ Դերենիկ եպիսկոպոս Փոլատեանէ, ճիշդ ինը տարիներ ետք, քահա- նայական կարգ ստանայի Անթիլիասի Մայր Տաճարին մէջ: Նախախնամական կարգադրութիւն իսկապէս:*

### Դէպի Երուսաղէմ

*Մարտ 2-ին Եգիպտահայ ազգայիններ թէ՛ Գահիրէի եւ թէ՛ Աղեքսանդրիոյ մէջ ուր նաեւ այցի գնաց Հայրապետը, Դպրեվանքի սաներու կրթաթոշակներ եւ կանխիկ հանգանակութիւններ կատարելով պատուեցին Նորընտիր Հայրապետը: Գահիրէէն շոգեկառքի գնացքով Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեանց եւ իր շքախումբը մեկնեցան Երուսաղէմ Սրբոց Յակոբեանց Պատրիարքարան ուր բացառիկ շուքով, Նորընտիր Կիւրեղ Բ Պատրիարքի գլխաւորութեամբ եւ օտար բարձրաստիճան եկեղեցականներու ներկայութեամբ դիմաւորուեցաւ եւ ողջագուրմամբ Պատրիարք Հօր հետ հրաւիրուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանէն տալու իր հայրական պատգամը: Հանդիպակած կիրակին Վեհափառ Հիւրը ի ժամ սուրբ պատարագի պիտի քարոզէր, եւ երեկոյեան պիտի պատուէին զինք միաբանական ճաշկերոյթով: Կիլիկիոյ Աթոռէն Երուսաղէմ եկած էին Եփրեմ Արքեպիսկոպոս Տոհմունի եւ Զարեհ Ծ. Վրդ. Փայասլեան, որոնք կը դիմաւորէին Հայրապետն ու միաբանակից Դերենիկ վարդապետը:*

*Նոյն 1945 տարուան աշնան օծեալ եւ գահակալած Տ.Տ. Գարեգին Յովսեփեանց Կիլիկիոյ Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածին պիտի մեկնէր նախագահելու Տ.Տ. Գէորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան եւ անձամբ օծելու զինք: Նոյն օրերուն Մայր Աթոռի մէջ նորընտիր Կաթողիկոսի ձեռամբ եպիսկոպոս պիտի ձեռնադրուէր Պատրիարք Տ. Կիւրեղ Ծ. Վարդապետ Իսրայէլեանը տաս ընծայացուներու հետ միասին: Գարեգին Հայրապետ ցաւօք սրտի Անթիլիասի Մայր Տաճարին մէջ պիտի կատարէր Կիւրեղ Պատրիարքի վերջին օծումը չորս տարիներ ետք երբ Պատրիարքը կանխահաս տարիքի մէջ կը վախճանէր Պէյրութի մէջ, եւ դէպի Երուսաղէմ յատուկ ճամբորդութեամբ եւս պիտի նախագահէր թաղման կարգին:*

### Ժամանում Կիլիկեան Աթոռ

*Երկու լման ամիսներու յոգնեցուցիչ ճամբորդութենէ ետք 1945 թուի Մարտ 23-ին Գարեգին Ընտրեալ Հայրապետը Հայֆայէն դէպի Լիբանան ցամաքի ճամբով Անթիլիաս կը հասնէր հայրապետական օծում եւ գահակալութիւն ստանալու համար: Սահմանագլխին դիմաւորութեան եկած էին Լիբանանի Թեմին Կաթողիկոսական Փոխանորդ Արտաւազդ Արքեպս. Սիւրմէեան, հայ երեսփոխաններ, եւ կեդրոնական վարչութեան կրօնական եւ աշխարհական անդամներ, մամուլի, կուսակցութեանց, կրթական եւ ՀԲԸ Միութեան ներկայացուցիչներ: Աւելի քան 1000 ինքնաշարժներու թափօրով Հայրապետը Պէյրութ կը հասնէր, եւ անցնելով հայահոծ թաղերէն Անթիլիաս կը հասնէր եւ կը դիմաւորուէր Աթոռին Տեղապահ Խադ Արքեպիսկոպոս Աջապահեանի եւ միաբանութեան կողմէ:*

*Գարեգին Հայրապետը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճար մուտք կը գործէր «Հրաշափառ»ի երգեցողութեամբ եւ Տեղապահը իր եւ միաբանութեան ջերմ զգացումները յայտնելով կ՚ըսէր «տարիներու երկար սպասումէ յետոյ վերջապէս Ձեր Բարձրաշնորհ Սրբազնութեան ներկայութիւնը մեր մէջ անպատում եւ անսահման ուրախութեամբ կը լեցնէ մեր սրտերը», հրաւիրելով զինք «թագաւորելու ոչ աւերակաց վրայ եւ ոչ ալ ջախջախուած Աթոռի վրայ, այլ աստանդական թափառումէ ետք ինքզինք վերագտած Անթիլիասի ծովափին վրայ, յաջորդելու Սահակ, Բաբգէն, եւ Պետրոս մեծագործ եւ շինարար Հայրապետներուն»:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ







Ուր ալ գտնուին
աշակերտները…
Մեր դասերը եւ մեր սիրտերը
միշտ ձեզի հետ են:

CTA CALIFORNIA TEACHERS ASSOCIATION

cta.org







# «Ակնթարթներ» Պէպօ Սիմոնեանէն (Ա.)

ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

2012-ին, Պէյրութի մէջ լոյս տեսաւ 324 էջանի հատոր մը՝ «Ակնթարթներ-Մարդու Եւ Կեանքի Առօրեայէն» վերնագրով: Հերթական գիրքը բազմաբեղուն մտաւորական Պէպօ Սիմոնեանի գրիչէն:

Հատորը արձակ էջերու ժողովածու մըն է, ուր մէկ կողքի տակ 40 գրութիւններ են պարփակուած: Հրապարակագրութեան մօտեցող, կեանքի թոհուբոհէն քաղուած այդ «ակնթարթներ»ը, ընդհանրապէս գրուած են 1985-էն 2005 թուականներուն: Ինչպէ՞ս բնորոշել հատորը.- յուշե՞ր, մտորումնե՞ր, խոհ՞ր, տագնապնե՞ր. բոլորը միասին՝ հաւանաբար:

Դիպուկ է հատորին վերնագիրը՝ «ակնթարթներ»: Եւ ի՞նչ է իւրաքանչիւր մարդու կեանքը՝ եթէ ոչ երկարատեւ կամ կարճատեւ անդադրում ակնթարթներու շղթայ մը, ուր արցունք եւ ժպիտ, խինդ ու կսկիծ, յաջողութիւններ եւ սայթաքումներ, ակամայ դիպուածներ եւ միտումնաւոր դէպքեր, յուսավառութիւններ եւ յուսախաբութիւններ կը հրմշտկեն զիրար: Անոնց շարանովն է որ կը հիւսուի անհատի մը կեանքը: Կենսապատումի մը տող առ տող շարադրուած էջերն են այդ անխուսափելի ակնթարթները, անոր քաղցր կամ դառն առէջները:

Պէպօ Սիմոնեանի մեզմէ բաժանման 5-րդ տարելիցին առթիւ, երբ յետահայեաց ակնարկով մը կ՛ուզենք վերյիշել զինք, պիտի նշմարենք որ արգասաբեր կեանք մը եղաւ անորը՝ իր երփնագոյն կենսագրականով: Բազմաթիւ ոլորտներէ ներս իր ծառայութեան եւ աշխատանքին բերումով, իր հորիզոնական յարաբերութիւններով, տարաբնոյթ մակարդակի մարդոց հետ իր շփումներով, հետզհետէ կուտակուած փորձառութեամբ եւ մարդաճանաչութեամբ անցաւ գունեղ ճանապարհով եւ կերտեց ինքնադրոշմ կեանք մը: Երբ դեգերինք իր գրական թողօնին արահետներով, կը տեսնենք թէ իր գործունէութեան լայնահուն հորիզոնէն ի՞նչեր արձանագրած է որպէս ուսանելի ակնթարթներ: Եւ ինչպէ՞ս չըլլար այդպիսին, երբ որպէս գրող, ուսուցիչ, տնօրէն, գործիչ, ղեկավար, հրապարակագիր, արձակագիր, խմբագիր, գրականագէտ ու մանկավարժ պիտի յարաբերէր է՛ւ աշակերտներու է՛ւ ծնողներու, ազգային դէմքերու եւ հայրենի մտաւորականներու, ժողովուրդի տարբեր շերտերու ներկայացուցիչներու հետ: Ու այդ բոլորը զինք կոփեցին որպէս խոհուն մարդը, հայրենասէրը, զգայուն բանաստեղծը, լիբանանցի պարկեշտ քաղաքացին, ուղղադաւան ընկերվարականը, մարդասէր ու ծանրակշիռ հեղինակութիւնը: Իսկ գրաւոր ձգած ժառանգութիւնը կ՛ապացուցէ, թէ ան հմուտ գրականագէտ էր, մամուլի եւ մշակոյթի սիրահար, մանկավարժութեան տեսաբան եւ կեանքի առօրեան հարազատօրէն քանդակած վկայ:

1966-ին, Մեծ Եղեռնի 50-ամեակէն ետք, որպէս տարագիր հայու արդարաձայն ճիչ, կը գրէր «Մենք՝ Սերունդ Տարագիրե (Իմ սերունդիս).

Աշխարհի ցուրտին ու բորանին դէմ՝



Հայու հաւատքին ջերմութեամբ վառուած,
Ու մեր պատմութեան լոյսերով հարբած,
Մենք՝ պանդխտացած տարագիր կռունկ...
Եւ օտար հողի վրայ աճա~ծ սունկ...
Բայց կանգնած խրո՛խտ, բա՛րձր ու խիզախ,
Օտար լուսնի տակ՝ մեր Լուսնին յառած,
Մե՛նք, չնահանջո՛ղ, չյուսալքուո՛ղ
Յարութեան որո՛տ... յաղթանակի ձա՛յն...
Զայներու դէմ խորք, կանչերուն դէմ տար
Մեր լեզուն աճող սրինգ ու քնար...
Քառուղիներուն Սփիւռքի՝ ինկած
Մե՛նք, հողմացրիւ ոստ՝ սերունդ տարագիր,
Մենք մեր ինքնութեան դրօշին հուրհրան
Տուեր ենք երդում հաւատարմութեան...
Ու դաշտին վրայ մեր հոգիներուն,
Բարձրացուցեր ենք կոթողի նման,
Ոգեղէն Մասիսն որպէս տապանակ
Մեր ուխտին անխախտ ու յոյսին անմար...
Ու պանթէոնին վրայ մեր գիտակցութեան
Քանդակ առ քանդակ կանգներ ենք արձան
Որպէս անխորտակ սուրբ խորհրդանիշ
Մեր գոյատեւման, մեր յաւերժութեան...

Ե՛ւ լիբանանցի եւ հայ մարդու համաձոյլ ապրումով ու երախտագիտութեամբ 1968-ին կը գրէր («Մենք՝ Մայրիներու Զաւակ»).

Մեր եղերաբախտ ու հալածական
Հայրերը սըւաղ երբ դուռդ թակեցին
Երկիր Արեւի եւ Մայրիներու,
Հարազատի պէս... ու մօր պէս բարի...
Սրտով լայնաբաց ու ասպետական
Առիր թեւերուդ տաքցնող ջերմութեան
Եւ կենսանորոգ հովանիին տակ:
Զարկամ ոսոխի եաթաղանէն սուր
Ճողոպրած անո՛ք հայրերը մեր լո՛ւռ

Շար.ը էջ 19

# Գլուխը Ինչպէս Փեթակ

Ռ. ԿՈՐԻՒՆ

Պսակաժահրից վարակման մտավախութիւնը զգալի է գրեթէ ամենուրեք, այն երկրներում ուր մուտք է գործել այդ համաճարակը: Արդէն քանի ամիս է շփումները նուազել, հաւաքները առկախուել, ճամբորդութիւնները կասեցուել են եւ այլն, իսկ հեռախօսային եւ առցանցային անփորձանք կապերը դար ու դադար չունեն՝ գործի, աշխատանքի եւ մէկն զմէկու վիճակից տեղեկանալու առումով:

Մի շաբաթ կը լինէր որ բարեկամիցս լուր չունէի, մտահոգութիւնս փարատելու եւ առօրեայ հարցերով կիսուելու նպատակով նրա համարը հաւաքեցի եւ ալօ-ալօ ասելով կապը միացաւ.

-Այ ընկե՛ր-բարեկամ, մի շաբաթ է ո՞ւր ես, ձայնդ չենք լսում, չլինի Տէրը մի՛ արասցէ ապառողջ ես:

-Չէ՛, ընկեր ջան, դեռ սաղ ենք, ինչպէս վախեցրել են, որ տնից դուրս չեմ գալիս, տունն էլ մնալով մտածումների մէջ ընկնելով գլուխս ինչպէս մեղուների փեթակ բզզում է: Էսօր առաւօտեան տեսայ շատ եմ նեղանում, դիմակս հագնելով դուրս եկայ քայլելու, հիմա որ քեզ հետ խօսում եմ, գտնւում եմ Գլենդէլի Բրանդ փարքում (զբօսայգի), մեր տնից մինչեւ այստեղ երկար ճանապարհ է, չեմ իմանում, երբ եմ հասել:

-Ինչպէս թէ չես իմանում:

-Իրօք հէնց էդպէս, քանի որ անընդհատ շուրջս եմ նայել, որ յանկարծ չմօտենամ կամ չդիպչեմ մէկին:

-Միթէ՞ այս դժնի օրերին արտօնուած է փարք մտնել:

-Այս մէկը՝ այո, բայց այլ տեղերինը չգիտեմ, օրը կիրակի լինելով լեցուն է փարքը, շատերի դէմքերին դիմակ, մեքենաների մուտքը արգելուած է, ընտանիքներ սեղանների շուրջը ազատ վայելում են զբօսայգու ծիծաղկուն կանաչութիւնը, կապտաւուն երկինքը եւ գարնանային զովասուն շունչը, այս թովիչ բնութիւնը մարդկանց մագնիսի պէս ձգել է դէպի իրեն մոռանալով քովիդ ու քորոնա գայթաղկիչ վարակները, ինձ թւում է թէ ներկաներից որոշները չեն ըմբռնում նրանց լուրջ վտանգը:

-Որ այդպէս, դու ինքդ չես վախենո՞ւմ այդ մարդաշատ վայրում ես յայտնուել:

-Ճիշտ ես, դեհ ասացի, սիրտս մի տեսակ ճմլւում էր մենակութիւնից եւ ձանձրոյթից, բայց ինձ առանձնացրել եմ մի բարձր տեղում կանաչների մէջից դիտելով դիմակաւորուած բազմութիւնը եռ ու զեռի մէջ:

Դիմակներ բառը լսելով միտքս գնաց դէպի գրող Սամուէլ Բեգլարեանի յօդուածում իմ կարդացած պարբերութեան՝ «Փակվելը դեռ ոչինչ, դիմակներն աւելի զավեշտալի ու խղճատեսք դարձրին բոլորիս վիճակը»:

Սթափուելով շարունակեցի ընկերոջս հետ խօսք ու զրոյցը.

-Այդ վիճակում գոնէ ինձ կը զանգէիր եւ միասնաբար մի բան կը մտածէինք, որպէսզի լիցքաթափուէիր:

-Խելքս չկտրեց, վազ անցիր, արդէն ճամբայ ընկնելու վրայ եմ, նախքան դա, կ՛ուզեմ պատմել Թեհրանի մեր թաղեցի ընկերներից մէկի մասին այստեղ Գլենդէլում: Հա, մի երկու օր առաջ էր, զանգեցի իրեն եւ ինչ լսեցի...

-Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ լռեցիր:

-Չեմ իմանում, ճիշտ եմ անո՞ւմ պատմել, ոչինչ, դու հօ օտարական չես, միայն թող անունը չյայտարարեմ:

-Լաւ կ՛անես անունը չտալ, էսպէս աւելի ընդունելի եւ ասեկոսի ենթակայ չի լինի, հաւատացած եմ սրտում պահուած խօսքը գաղտնիք է մինչեւ այն ատեն, երբ չի դրսեւորուել, հիմա ասա, տեսնեմ, ինչ էր պատահել:

-Ընտանիքով այս ճիվաղ ժահրով էին վարակուել՝ հինգ հոգի անդամներով:

-Ինչպէ՞ս էր պատահել:

-Տան կրտսեր աղջիկը հանդիպման էր գնացել ընկերուհիների հետ առանց դիմակի, մի քանի օրերից ողջ ընտանիքը ջերմ ու սոսկալի հազ, այնպէս որ բոլորը մատնուել էին մտատանջութեան, նրա պատմածի համաձայն ասում էր.-գիշերները քուն չունէինք, սակայն բժշկի խորհուրդների եւ մեկուսացման շնորհիւ խաղաղ հոգով եւ համբերութեամբ յաղթեցինք նրան եւ ապաքինեուցինք, մեր բժիշկը թելադրում էր հեղուկ ըմպելիք շարունակ գործածել եւ սննդառատ ուտեստեղէն օգտագործել, տասնհինգ օրերի դժուարութիւններից յետոյ փառք Աստուծու հիմա շատ լաւ ենք եւ ոչ մէկ մտահոգութիւն, սակայն մնալով պատուէրների ներքոյ:

-Արդարեւ մեծապէս ուրախացնող լուր, այն որ կորուստ չենք ունեցել, թող որ ոչ մի ընտանիքում կորուստ չպատահի, Աստուծոյ տուած կեանքը թող մարդիկ վայելեն խաղաղ հեռու որեւէ տեսակի փորձանքից:

-Ընկե՛ր ջան, մոռացայ ասեմ որ նրա փոքր աղջիկը ֆիզիքապէս նուազ է եղել, էդ պատճառով այդ բացիլը նրան է թակարդը գցել որպէսզի իր սերունդը տարածի ու մեծացնի:

Ես էլ հաւատացած եմ որ տկարութիւնը փորձանքների է ենթակայ: Այս առնչութեամբ թող յիշեմ գրող Սամուէլ Խալաթեանի՝ «Դիմակը հանելու ժամանակը» յօդուածի այս հատուածը՝, Աշխարհը թոյլերին չի սիրում: Դրա համար էլ գիշատիչ է ստեղծել, որ թոյլ ու հիւանդին ոչնչացնի: Ուրեմն հզօրանալ է պէտք: Հզօրանալու համար՝ միասնութիւն է պէտք, իսկ դրա համար՝ կամք ու տրամաբանութիւն: Բա ինչո՞ւ են ասում, Աստուած ում ուզում է պատժել՝ խելքն առնում է:

Այո՛, անձնապէս հզօրանալ գիտութեամբ եւ նիւթականով, անձերի հզօրացումը հայրենիքի հզօրացումն է, այո՛, միասնականութեամբ եւ միակամութեամբ ու իշխանաւորների անսակարգ նուիրումով միայն կայ հզօրացում, հայ ժողովուրդը անհրաժեշտօրէն կարիքն ունի այդ հզօրացման իր գոյութիւնը եւ իսկութիւնը պաշտպանելու համար:

www.massispost.com
Daily News Updated

# Համբարձում «Եալա...»
## Մարդկային Բարոյական Կենցաղի Ամենավսեմ Չափանիշը՝ Ճշմարտութիւնն է



ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

*Մարկոս եւ Ղուկաս աւետարանիչներ իրենց աւետարաններում յիշատակել են, որ Յիսուս Քրիստոս երկրային կեանքից քառասուն օրեր յետոյ երկինք համբարձել: Քրիստոսի անունը «Յիսուս» է, «Քրիստոս» անունը յետոյ էր ընդունուել, Յունարէն լեզուով նշանակել «Օծեալ»: Քրիստոսի Համբարձման մասին յիշատակուել է նաեւ «Գործք Առաքելոց»-ում, որ Յիսուս Քրիստոս համբարձել է Երուսաղէմի Ձիթենեաց լերան վրայից: Համբարձում նշանակել է՝ «Բարձրացում», երկրից դրախտ մեկնում: Աստուած, մեռելներից առաջինը Քրիստոսին կեանք տուել, Նրա մահուանից (Զատիկ-Յարութիւն) քառասուն օրեր յետոյ վերցրել, համբարձել դրախտ, որտեղ Քրիստոս բազմել է Աստուծոյ աջ կողմի աթոռին: Աւետարանի խօսքով՝ «Համբարձում Տեառն մերոյ Յիսուս Քրիստոս»: Այս մի քանի տողերը գրեցի ոչ որպէս իմ խօսք, քրիստոնէական հաւատքի խորհրդանիշն է Քրիստոսի «Յարութեան» ու «Համբարձման» յայտնութիւնները, մարդիկ կան, հաւատում, որ այն մարդկային բարոյական կենցաղի ճշմարտութիւնն է, հաւատացողին ու ոչ հաւատացողին... ազատ խօսքի իրաւունք:*

*Գրութիւնս շարունակելուց առաջ, համառօտ գիր եմ անելու Հայաստանում թագաւորած Տրդատ Գ. Մեծ թագաւորի մասին, որը հայոց աշխարհում սատարել էր քրիստոնէութեան ընդունմանը: Տրդատ եղել Արշակունեաց Հայաստանի պետական ու քաղաքական խոշոր գործիչներից, վերականգնել Մեծ Հայքի թագաւորութեան տարածքային ամբողջականութիւնը, ըստ Մովսէս Խորենացու խօսքի եղել հայոց վերջին հզօր թագաւորը: Խօսքս մէջբերել եմ Պատմահայր Մովսէս Խորենացու եւ պատմիչ Ագաթանգեղոսի մատեանների յիշատակութիւններից: Տրդատի հայր՝ Խոսրով Ա., Անակ իշխանի (Գրիգոր Լուսաւորիչի հայր) կողմից սպանութիւնից յետոյ, նախարար Արտավազդ Մանդակունին Խոսրովի մանկահասակ որդի Տրդատին փախցրել Հռոմ: Կրթութիւն ստացել, դաստիարակուել Հռոմի արքունիքում: Խորենացին վկայել է, որ նա տիրապետել էր արտակարգ ուժի, աչքի ընկել կրկեսում մարտեր վարելով, իր բազուկների ուժով կանգնեցրել Հռոմի փողոցով սլացող չորս ձիերով լծուած մարդատար կառքը: Հայոց Տրդատ ու Արտաւազդ թագաւորներ մասնակցել էին ողիմպիական խաղերին, հանդիսացել ըմբշամարտի ու կռփամարտի ախոյեաններ: Մասնակցել Հռոմի կայսրութեան վարած պատերազմներին: Պարսկաստանի դէմ Հռոմի մղած յաղթական արշաւանքից յետոյ ժամանակաւորապէս տիրել հայոց գահին: Հայաստան աւելի քան տասը տարիներ պատերազմել Սասանեան Պարսկաստանի դէմ, ճանաչել էին Տրդատի թագաւորութիւնը: Նախօրօք դաշինք կնքած եղել ալանների հետ, կնութեան արել Նրանց թագաւորի դուստր Աշխէնին: Ալլանների դուստրեր Սաթենիկ ու Աշխէն Հայաստանի թագաւորական տանը բաշխել բազում զաւակներ, Նրանց ժառանգների ծիներում ալանների ցեղի արեան շունչ կայ: Օսեր-Օսեթիա կոչուած ազգ ու նոր օրերի Ալանիա պետութիւններ գոյատեւում են հարաւային ու հիւսիսային կովկասի տարածքներում: Ինչո՞ւ բարեկամական յարաբերութիւններ չստեղծել նրանց հետ, դրացի Վրաստանի թագաւորական մի տոհմի տիրապետութեան ժառանգների ծիները ուղղակի հայոց Բագրատունեաց թագաւորական տոհմից են, նրանք նոյն տարածքի ուրիշ պետութիւնների հետ բարեկամութիւն անում... հայերի հետ եթէ թշնամի չեն, բարեկամ էլ չեն...: Տրդատ վերահաստատել էր «Արտաշիսական» սահմանագծերը, անցկացրել նոր «Աշխարհագիր»:*

*Տրդատ Գ. գահակալութեան առաջին տարիներին հալածել էր Հայաստանում քիրստոնէութեան հետեւորդներին: Քրիստոնէական հաւատքը տարածուել էր շրջանում: Արեւմտեան մշակոյթով ու գիտելիքներով իմաստացած Տրդատ, երկրում քրիստոնէական հաւատքի ընդունումը հզօր միջոց էր համարել Հայաստանը Պարսկաստանի ու Բիւզանդիայի մշակոյթային ազդեցութիւնից զերծ պահելու եւ երկրում միապետական իշխանութիւնը ամրապնդելու: Հաւաստում են, որ Տրդատ քրիստոնէական հաւատքում նկատել էր իրենց հին աստուածների իմաստութեան շաւիղներ: Տրդատ, 301 թուականին Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակել, ազգին աշխնորդել նոր հաւատքին: Գրիգոր Լուսաւորիչին բանտից ազատ արձակել: Տրդատի անմիջական մասնակցութեամբ Գրիգոր Լուսաւորիչի հետ բարբարոսաբար քանդել էին հայոց հին հաւատքի մեհեան-տաճարները, յափշտակել նրանց անբաւ հարստութիւնը, թուրք-սելճուքների նման այրել նրանց արարած մատեանները, ոչինչ թողել որ յիշեցնէր հայոց տոհմական հաւատքը: Ըստ աւանդութեան, Տրդատ կեանքի վերջին տարիներին իշխանութիւնը յանձնել Գրիգոր Լուսաւորիչին, հեռացել Դարանաղեաց գաւառի, Սեպուհ լերան Մանեայ Այրք կոչուած վայրը աղօթելու, նախարների խնդրանքով չէր վերադարձել գահ, որտեղ թունաւորել էին նրան:*

*Փլած տաճարների որմերից, նոյն տեղում նոր հաւատքի տներ էին պատել: Արմին-հայեր նորէն գնացել իրենց փլած մեհեաններ, երկար-երկար-տարիներ շարունակել գնալ եւ վերջապէս սկսել քրիստոնէական տաճարներ մտնել: Հայաստան, նրա մարդիկ շարունակել էին տօնախմբել իրենց հին աստուածների ու բնութեան երեւոյթների իմաստութիւնը: Գրիգոր Լուսաւորիչ, այդ բոլոր տօները փոխարինել էր քրիստոնէական հաւատքի եղած-չեղած երեւոյթներին, որ Արմին-հայերի մտքերում անէացնէր նրանց հին հաւատքի պաշտամունքը: Ահա այսպէս, հայոց աշխարհի նախնիների «Ծաղկի» սքանչանքի տօնը փոխարինել էին Քրիստոսի «Համբարձման» տօնին, եւ այդպէս շարունակ...: Քրիստոս, լոյսերի մէջ իջել Վաղարշապատ, մուրճով երք անգամ զարկել գետնին, պատուիրել նոյն տեղում տաճար պատել...: Մի քանի տասնամեակ առաջ, խորանի վերանորոգման ատէն խորշ էին յայտնաբերել, իջել այնտեղ, Սարտարամէտ աստուծոյ մեհեանի պատերն էին, կրակարանն էր...: Այս վերջին տողերից խօսքն է ճշմարտութիւնը... Նրանից նախկին տողերը ճշմարտութի՞ւն են: Այս գրութեան առաջաբանը գրեցի Տրդատ Գ. հզօր թագաւորին պանծացնելու համար, նա հզօր եղել, հզօր Հայաստան ստեղծել:*

*Կռիվ եղել Հայաստանում, երկարատեւ կռիւ, այն դադարել էր հեթանոս քրմապետ Արձան-ի զարնուելուց յետոյ: Հայոց հին հաւատքը ամուր էր մնացել Սիւնիքում, Գողթան գաւառի երգիչներ շարունակել էին երգել իրենց հին աստուածների, ազգի տոհմական հաւատքի երգերը: Երանելի Մեսրոպ Մաշտոց, գնացել Սիւնիք, իր ծրագրի իրականացման համար հանդիպել դիմադրութեան, այն իրականցնելու համար նորէն ուժ կիրառուել, այստեղ էլ ուժով կատարուել նոր հաւատքի տարածումը: Իմաստուն է ժողովուրդը, պահպանել իրենց նախնիների աւանդութիւնները, այն որպէս ջահ փոխանցել նոր սերունդի մարդկանց: Կարծես կենդանի են հայոց հին աստուածները, հայոց նահապետ Հայկը, արքաներ՝ Արամը, Արա գեղեցիկը, Արամէն, Արամախը, Տիգրանը, Արշակը, Պապ-ը, Վռամշապուհը, Արտաշէսը, Արտաւազդը, Աշոտ Երկաթը, Հեթումը, սպարապետ Վարդանը, ահա նրանք ու դեռ հարիւրներ հիմա մեզ հետ տողանցում աշխարհում, քանի դեռ մեզ հետ կը տողանցեն ողջ է Արմէն-Հայ ցեղը: Նոր հաւատքի մարդիկ, անկարելի եղաւ Արմին-հայերի հոգիները պատռել, վանել նրանց հին աստուածներին, վանել նրանց տոհմական հաւատքի լոյսի ճշմարտութիւնը: Արմին Հայ, երբ դու գնաս դէպի հիւսիսային կողմն հայոց աշխարհի, մի պահ կանգնիր «Արայի լերան» լանջի առաջ, մի պահ կիսաբաց աչքերով նայի՛րնայիր, պիտի տեսնես քու կրակի, լոյսի աստուած Արային, շարունակիր երկար նայել, որ հաւատաս Արան քու աշխարհում է...:*

*Քրիստոսի «Համբարձման» տօնն է, նոր հաւատքի մարդիկ տօնախմբում այն, հաւատում, որ նա ողջ է, ամպերի քօղերը մարմինը գրկած բարձրացել երկինք, գնացել բազմելու հօր կողքը: Չէ... չեղա՜ւ... ճշմարտութի՞ւն... կարուղ է...: Յարութիւն, Համբարձում՝ կեանքի յարատեւման խորհրդանիշ արել: Գարուն է, Մայիս ամսում Արմին-հայերի նախնիների «Ծաղիկի» տօնն է: Գարուն է ծաղկել հայոց աշխարհում, գարնան անուշ հովիկները օրօրում դաշտերի ցորեանի ծովերը, ծաղկել են իրենց այգիները, ծաղկել էին իրեննց լեռների լանջերը, ծաղկել էին իրենց հոգիները: Արմին-հայերի նախնիներ մտել իրենց մեհեաններ, իրենց աստուածների բագինները ծածկել ծաղիկներով, մտել Աստղիկի ու Վահագնի սենեակ, ծաղիկներ շաղ տուել, ինչպէս նրանց ամուսնութեան հանդէսին, ափսոս եղեւ, որ Աստղիկ «Վահագնի Սենեակ» մտնելիս ուսից ընկել էր հարսանիքին կախուած «հանապազօրեայ» լաւաշ հացը, աստուածները ողբացել էին, բարձրաձայնել, որ Աստղիկ դիցուհին չէր մայրանայ, Վահագն ու Աստղիկ անզաւակ կը մնային: Հիմա էլ հարսանիքի մեծ մայր տատը հարսի ու փեսայի ուսերից լաւաշ հաց կախում: Ուրիշ երկրներում հանգրուանած Արմին-հայ, քու մանչերի հետ եկո՛ւր քու նախնիների երկիր, գնա՛յ Միհրի տաճար, նրա աստիճանները ծածկուած են ծաղիկներով, արեւ աստուած Միհրն լոյս ցանել նրանց երեսին, ծաղկից առաւել ի՜նչ կայ սիրուն, կայ, Անահիտ դիցուհու երկնից շաղ տուած վարդի թերթիկների հպումից շառագունած հայ աղջիկներ: Արմին-հայեր ծաղկի բոցավառ փունջեր գրկած գալիս-գալիս են Միհրի տաճար, գնում ատրուշանից մի կտոր կրակ վերցնում, որ տանեն իրենց տներ, որ մշտական լոյս լինէր այնտեղ, այնպէս ինչպէս եկեղեցուց մոմի վառած լոյս տարել:*

*Հայ աղջիկները Մայիս ամսի «Համբարձման» տօնին բարձրացել լեռների լանջեր՝ Բիւրակնից դէպի ձիւնով քօղուած Արագած, Լոռւայ սարեր, ծաղիկներ քաղել, հարսանեկան պսակների նման ճակատներին կապել: Գնացել էին*

Շար.ը էջ 19

# Արցախը Հայաստան է

Շարունակուած էջ 2-էն

*տունը: Ինչի հասաւ իր ֆուտբոլային դիւանագիտութեամբ Սերժ Սարգսեանը, Թուրքն ի վերջոյ դուռը փակեց նրա դէմքին ու հեռացաւ, իսկ նա շատ դիւանագէտ էր, նոյնիսկ ամաչում էր Էրդողանի ներկայութեամբ ցեղասպանութիւն բառն արտասանել, եւ ի՞նչ՝ բացուեցի՞ն սահմանները, ի հարկէ ոչ: Թուրքն իր խաղը խաղաց եւ գնաց, վաղն էլ կասի ես ձեր նախագահի հետ խօսել եմ, նա ցեղասպանութեան մասին բան չի ասել՝ դէ գնա ու բացատրի աշխարհին, որ դիւանագիտական մօտեցում էիր ցուցաբերում: Քաղաքականութեան մէջ պէտք է պահանջատէր լինել, Թղթյայ չերեփով միջազգային քաղաքական ապուրին մօտեցողին ոչ ոք բանի տեղ չի դնում: Այդ մասին դեռ Խրիմեան Հայրիկն է ասել: Ռուսը, որ մեր դաշնակիցն է, առանց ամօթի սէթեւեթում է Թուրքի եւ ադրբեջանցու հետ, իսկ մենք հայերս լուռ խանդում ենք, նոյնիսկ վախենում ենք խանդի տեսարաններ սարքել: Դրանից էլ լկտիանում են: Լաւրովը նեղացած երեխայի պէս խօսում է գազի գներից, իսկ մենք գլուխներս կախում եւ նրան չենք հակադարձում, որ մեր յարաբերութիւնները կարող է աւելի ջերմ լինէին, եթէ իրենք զէնք չվաճառէին դաշնակից պետութեան թշնամուն կամ որոշ «հերոսների» շնորհիւ կոպեկներով մեր ստրատեգիական օբյեկտները ձեռքբերելուց յետոյ չթալանէին: Դէ կորացէք, կորացէք այնքան, որ ձեր ապրելու իրաւունքն էլ իրենց քաղաքական շահերի համար վաճառեն:*

*Եթէ Սերժ Սարգսեանն այդքան մտերիմ էր Պուտինի հետ եւ ճիշտ յարաբերութիւններ ունէր մեր ռազմավարական գործընկերոջ հետ, ինչպէս պատահեց, որ Ադրբեջանը ծածուկ յարձակուեց: Լաւ մենք միջազգային ստանդարտներին համապատասխան ազգային անվտանգութիւն եւ հետախուզութիւն չունէինք, բայց իրենք ունէին չէ եւ արբանեակներով տեսնում էին, որ մեր թշնամին յարձակւում է՝ ինչո՞ւ չզգուշացրեցին իրենց սիրելի Սերժ Ազատիչին թշնամու մօտենալու մասին: Երկրի ներսում լեզուով խրամատներ են փորում, իսկ արտերկրում մուկ են դառնում: Հիմա ինչը ձեզ դուր չի գալիս, որ Արցախի ղեկավարը գիտի, թէ որն է Հայաստանի մայրաքաղաքը, թէ որ երդման արարողութեան ժամանակ ասում է պարզ ճշմարտութիւն, որ իր հայրենիքը Հայաստանն է: Այո՛, Արցախը Հայաստան է, դա գիտեն նոյնիսկ Մինսկի խմբի համանախագահները, սակայն քանի դեռ մենք վախենում ենք բարձրաձայն ասել ճշմարտութիւնը, իրենք չեն վերցնի մեր բեռը: Արայիկ Յարութիւնեանի խօսքերով սկիզբ դրուեց մի նոր եւ վաղուց արդէն պահանջուող մօտեցման, իսկ բոլոր նրանք, որ ծաղրում են ասելով, որ դրանով Յարութիւնեանն իրեն իջեցնում է մարզպետի մակարդակի, նախ ասեմ, որ Հայաստանի մարզպետ լինելը պատիւ է, եւ յետոյ եղել են դէպքեր, որ ՀՀ մարզպետներից մէկը ու վերջինիս կողմնակիցները, ովքեր այսօր վրդովուած են Արայիկ Յարութիւնեանի խօսքերից, ՀՀ նախագահի, պաշտպանութեան նախարարի եւ այլ բարձրաստիճան պաշտօններ են զբաղեցրել: Եթէ Արցախը դէ ֆակտոյ ՀՀ մարզ չէր, այդ մարդիկ ինչպէս Հայաստանում պաշտօնեայ դարձան՝ քամին քշեց բերեց, թէ խոպան էին եկել: Զնայած երկրի նկատմամբ ունեցած խոպանային մօտեցումներն ակնյայտ են: Եթէ այդպէս է, բա մեր երեխաներն ում հայրենիքն են պաշտպանում Արցախում, որեւէ մէկը կասի ինձ կամ կարող է բացատրել: Կասէք դիւանագիտութիւնից չեմ հասկանում, բայց ձեր խղճի խորքում, եթէ ի հարկէ ունէք, գիտէք, որ ստրուկի հոգեբանութեամբ էք ապրում: Առակի նման՝ տեսքից վագր էք, բայց սրտներդ մկան է ու հէնց կատուին տեսնում էք, ծակ էք փնտրում, որ թաքնուէք: Եթէ մեր գոյութիւնը, աշխարհաքաղաքական այս դաշտում մէկ օր յանկարծ գերտէրութիւններին ձեռք չտայ, նրանք չեն նայելու, թէ որքան լաւն ենք մենք, եթէ չկարողանանք մեզ պաշտպանել, հանդիստ կ'ուտեն:*

*Երեք հրեայ Պաղեստինում տուն գնեցին, երկրի կէսը խլեցին, Պաղեստինն էլ ինքնիշխան դարձրեցին, հիմա տարածաշրջանում քաղաքականութիւն են թելադրում, իսկ դուք այդ ընթացքում ձեր բներում նստած դողում էիք ու սեփական ժողովրդին թալանում, իսկ հիմա ձեր առասպելական յաջողութիւններից էք խօսում: Այո, ճիշտ էք ասում, որ Նիկոլ Փաշինեանն է մեղաւոր, եթէ նա յեղափոխութեան ժամանակ իր տուած խոստումների գէթ կէսը կատարէր, այլ ոչ թէ միայն դատարկ սպառնալիքներ հնչեցնէր, դուք հիմա լուռ տանը նստած ձեր «վառանյոկին» կը սպասէիք եւ Աստուած կը կանչէիք, որ ձեզ չյիշէին, ոչ թէ դուրս կը գայիք փողոց ու մատ թափ կը տայիք՝ ասելով, որ անգրագէտ ժողովուրդը չհասկանալով յեղափոխութիւն արեց: Այո, մենք յեղափոխութիւն ենք արել իշխանութիւնը տուել ենք քայլողներին ու սպասում ենք արդիւնքներին: Զի լինի արդիւնք, իրենց կը հանենք երգողներին կը բերենք, դրանք էլ քաշեն՝ պարողներին կը բերենք, այնքան կը փոխենք մինչեւ մեր ցանկացած արդիւնքին հասնենք:*

*Այո, այսօր ՀՀ քաղաքացի Արայիկ Յարութիւնեանի խօսքերը լսելով ես հպարտ եմ, քանի որ նա իրօք յիշում է, թէ որ երկրի անձնագիրն է իր գրպանում, որ ազգի ներկայացուցիչն է եւ թէեւ իր ծննդավայրը Արցախն է, այն մասնիկն է իր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետութեան:*

*«ԱՌԱՒՕՏ«*

# ժողովուրդների «Հայր» Ստալինի Յոբելեանը

Շարունակուած էջ 13-էն

*ներ: Պատմութիւն ենք շինում հա՞...: Դու դեռ առանց ամաչելու՝ հարցնո՞ւմ ես, թէ ինչ ես ասել..., դու հայհոյեցիր մեր մեծ առաջնորդին, ընկեր Ստալինին: Դէպքին բոլոր ներկայ եղողներն այստեղ են եւ նրանք լսեցին..., այդպէս չէ՞ ընկերներ,- շրջուելով կողքիններին, վճռականօրէն եզրափակում է իր խօսքը կուսակցութեան քարտուղարը:*

*Խեղճ Ջամչեանը զգալով, որ ինքը վիճելով արդարութեան չի հասնելու, գլուխը կախ գնում է իր աշխատասենեակը:*

*Հազիւ տասը րոպէ անց, իրեն դուրս են հրաւիրում հիմնարկից, իսկ երկու օր անց, ամբողջ ընտանիքով, նա Սիբիր ուղեւորուող ապրանքատար գնացքի մէջ էր, իր նման հարիւրաւոր այլ հայ ընտանիքների հետ միասին:*

Massisweekly.com





ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ՊԱՐԶ Է ԵՒ
9 ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՐՑԱԽՈՅԶ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԿԱՐԵՒՈՐ ԵՆ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ԿԱՐԵՒՈՐ ԵՆ
ԱՄԷՆ ԱՆՁ ԿԱՐԵՒՈՐ Է

ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ
ԱՅՍՕՐ

Մարդահամար
CALIFORNIA
ALL
2020

CaliforniaCensus.org